# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փող. 2/3
**հեռախոս 023332550**
Էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2022 թվականի N 18-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7–Ի ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6–րդ կետով Բաղրամյան ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Բաղրամյան համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 7-ի՝ թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

**Կողմ** (14) **Դեմ** (0) **Ձեռնպահ** (1)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________________ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Կ.Տ.)

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Բաղրամյան համայնքի ավագանու
2022 թվականի մարտի 7 -ի
Թիվ 2 նիստի N 18-Ա որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ/Շ. Առաքելյան

- 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ/Շ. Առաքելյան

- 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԱՐՄԱՎԻՐ-1» ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ/Շ. Առաքելյան

- 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ/Շ. Առաքելյան

- 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ/Շ. Առաքելյան

- 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ « ԱՐԳԻՆԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ի ԿԱՆՈՆԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ/Շ. Առաքելյան

- 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ « ԱՐԳԻՆԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ի ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ/Շ. Առաքելյան

- 8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՒՄԻՏԵԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ/Շ. Առաքելյան

- 9. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ/Շ. Առաքելյան

- 10. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ ՔԱՂԱՅԻ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ/Շ. Առաքելյան

- 11. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ «ԱԼԵՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂԵ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ։

Զեկ/Շ. Առաքելյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնք, hwugt Բաղրամյան փող. 2/3
հեռախոս 023332550
Էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2022 թվականի N 19-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ «ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ»-Ի (ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐԻՆ) ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «տեղական ինքնակառավարման մասին»օրենքի 18–հոդվածի 1–ի մասի 34–րդ կետով,ՀՀ«Ընտանեկան օրենսգրքի» 109–րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2 հունիսի 2016 թվականի N 631-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը Բաղրամյան համայնքի ավագանին որոշում է

1.Ստեղծել Բաղրամյան համակնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին «ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» և անհրաժեշտ միջեցներ ձեռնարկել հանձնաժողովի արդյունավետ գործունեության ապահովելու համար:

2.Հաստատել «ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ»-ի կանոնակարգը համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (1)**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________________ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Կ.Տ.)

*Հավելված*

*Հայաստանի*
*Հանրապետութ*
*յան Արմավիրի*
*մարզի Բաղրամյան համայնքի ավագանու*
*2022 թվականի մարտի 7 -ի*
*Թիվ 2 նիստի N 19-Ա որոշման*

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Խնամակալության և հոգաբարձության մարմինները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքով, իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենքով իրենց վերապահված լիազորություններ ու կրում են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտականություններ:

2. Խնամակալության և հոգաբարձության մարմինները համայնքների ղեկավարներն են:

3. Խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով, «Երեխայի իրավունքների մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», , «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն կանոնադրությամբ:

4. Խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրենց իրավասությունների շրջանակներում, ըստ անհրաժեշտության, համագործակցում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 582-Ն որոշմամբ սահմանված՝ իրենց սպասարկման տարածքների սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների), զբաղվածության տարածքային կենտրոնների, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների, ուսումնական հաստատությունների, առողջապահական հաստատությունների, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային մարմինների, հասարակական կազմակերպությունների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշմամբ սահմանված միջգերատեսչական սոցիալական համագործակցության մյուս կողմերի հետ:

5. Խնամակալության և հոգաբարձության մարմինները երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության, իրավական ակտերի ու փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցների վերաբերյալ խորհրդատվություն, աջակցություն ու տեղեկատվություն ստանում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից: Խնամակալության և հոգաբարձության մարմիններն անհրաժեշտ

խորհրդատվություն, աջակցություն ու տեղեկատվություն կարող են ստանալ նաև մարզպետարաններից, ինչպես նաև մասնագիտական համապատասխան որակավորում ունեցող անհատ փորձագետներից և այդ ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններից ու հիմնադրամներից:

6. Խնամակալության և հոգաբարձության մարմինների որոշումները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Խնամակալության և հոգաբարձության մարմիններն իրենց վրա դրված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ենթարկվում են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

## II. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Խնամակալության և հոգաբարձության մարմինների խնդիրներն են՝

1) անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների, ինչպես նաև երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը.

2) երեխայի՝ ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու իրավունքի ապահովումը.

3) կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը, այդ թվում՝ նրանց հրատապ օգնության, անհրաժեշտության դեպքում նաև անհապաղ տեղավորման ապահովումը.

4) Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված այլ խնդիրներ:

## III. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Խնամակալության և հոգաբարձության մարմինները Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում՝

1) սահմանում են՝

ա. խնամակալություն տասնչորս տարին չլրացած անչափահասների, ինչպես նաև անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ,

բ. հոգաբարձություն 14-18 տարեկան անչափահասների, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ.

2) իրականացնում են՝

ա. երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողներին անգործունակ ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու (այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից իրենց երեխաներին վերցնելուց ծնողների հրաժարվելու դեպքերում), ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում,

բ. համայնքի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 962-Ն որոշմամբ սահմանված կարգով,

գ. խնամատար ծնողների ընտրությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ,

դ. «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման N 1 հավելվածի 14-րդ, 16-րդ, 60-րդ կետերով և N 2 հավելվածի 65-րդ ու 66-րդ կետերով սահմանված գործառույթները,

ե. խնամակալի կամ հոգաբարձուի պարտականությունները մինչև խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը,

զ. հսկողություն խնամակալների և հոգաբարձուների գործունեության նկատմամբ, այդ թվում՝ մշտադիտարկումների միջոցով,

է. վերահսկողություն խնամատար ծնողների վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ, այդ թվում՝ մշտադիտարկումների միջոցով,

ը. երեխայի դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն.

3) ապահովում են՝

ա. ընտանիքում դաստիարակվելու երեխայի իրավունքը՝ ծնողների բացակայության, նրանց ծնողական իրավունքներից զրկված լինելու և ծնողական հոգատարությունից զրկվելու այլ դեպքերում,

բ. երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը մինչև նրա տեղավորման հարցի լուծումը (կենսաբանական ընտանիք վերադարձնելը կամ խնամակալ կամ հոգաբարձու նշանակելը կամ խնամատար ընտանիքում տեղավորելը կամ որդեգրումը կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն կամ շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող այլ կազմակերպություն ընդունվելը).

4) թույլատրում են՝

ա. հոգաբարձուին 16 տարին լրացած խնամարկյալից առանձին ապրել, եթե դա բացասաբար չի անդրադառնա խնամարկյալի դաստիարակության, նրա իրավունքների և շահերի պաշտպանության վրա,

բ. ծնողական սահմանափակված իրավունքներով ծնողներին երեխայի հետ շփումը, եթե դա երեխայի վրա բացասական ազդեցություն չի ունենա,

գ. խնամակալին կնքել, իսկ հոգաբարձուին՝ համաձայնություն տալ կնքելու խնամարկյալի գույքի օտարման՝ ներառյալ փոխանակության կամ նվիրատվության, գույքը գրավ դնելու գործարքներ, որոնք հանգեցնում են խնամարկյալին պատկանող իրավունքներից հրաժարվելուն, նրա գույքը բաժանելուն կամ դրանից բաժիններ առանձնացնելուն կամ խնամարկյալի գույքի նվազեցմանը հանգեցնող ցանկացած այլ գործարքների, ինչպես նաև վարձակալության, այդ գույքն անհատույց օգտագործման հանձնելու գործարքներ.

5) բացահայտում են՝

ա. առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասին տեղեկությունները,

բ. ծնողների, ծնողական խնամքի բացակայության, ծնողական խնամքից զրկվելու այլ դեպքերը և ապահովում երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը,

գ. համայնքներում երեխայի ծննդյան փաստի՝ օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև երեխաների մահացության դեպքերը և դրա մասին իրազեկում մարզպետին (Երևանում՝ Երևանի քաղաքապետին), միաժամանակ նախաձեռնում դրանց պետական գրանցման գործընթացը.

6) հաշվի են առնում 10 տարին լրացած երեխայի կարծիքը՝ նրա իրավունքներին և շահերին առնչվող ցանկացած հարց քննարկելիս և որոշում կայացնելիս, երեխային վերաբերող բոլոր հարցերում պատշաճ ուշադրության են արժանացնում իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համոզմունքներն ու կարծիքը՝ նրա տարիքին և հասունությանը համապատասխան.

7) «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանն իրազեկում են համայնքներում երեխաների թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերի մասին.

8) ընտրում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին ընտանիքներում տեղավորելու ձևերը (խնամակալ, հոգաբարձու նշանակելը, խնամատար ընտանիքում խնամքի և դաստիարակության հանձնելը)՝ ելնելով երեխայի օրինական շահերի ապահովման սկզբունքից, ինչպես նաև ծնողական խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներից.

9) մասնակցում են՝

ա. դատարանում երեխաների որդեգրման հաստատմանը և որդեգրման վերացմանը վերաբերող գործերի քննությանը,

բ. երեխայից առանձին ապրող ծնողի ծնողական իրավունքների իրականացման հարցում ծագած կամ երեխայի դաստիարակության հետ կապված վեճերը քննող դատական նիստերին,

գ. դատարանում ծնողական իրավունքների սահմանափակման մասին գործերի քննությանը,

դ. դատարանում ծնողական իրավունքներից զրկելու մասին գործերի քննությանը,

ե. դատարանում ծնողական իրավունքների վերականգնման մասին գործերի քննությանը,

գ. դատարանում 16 տարեկան դարձած անչափահասին լրիվ գործունակ (էմանսիպացված) ճանաչելու մասին գործերի քննմանը՝ օրենքով սահմանված դեպքերում,

է. երեխաների շահերի պաշտպանության նպատակով ժառանգության բաժանման վերաբերյալ համաձայնությունը կազմելուն կամ ժառանգությունը բաժանելու վերաբերյալ գործի դատաքննությանը,

ը. քրեական վարույթում որպես օրինական ներկայացուցիչ չունեցող անչափահաս տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչ.

10) աջակցում են՝

ա. խնամատար ընտանիքին՝ երեխայի կյանքի և դաստիարակության անհրաժեշտ պայմանների ստեղծման համար,

բ. երեխային խնամատար ընտանիքում ինտեգրվելուն, ինչպես նաև երեխայի կենսաբանական ընտանիք վերադարձնելու գործընթացին,

գ. խնամակալներին ու հոգաբարձուներին խնամարկյալների խնամքի և դաստիարակության, նրանց հանգիստը կազմակերպելու գործում,

դ. երեխային մանկավարժահոգեբանական կենտրոն ուղղորդելուն համագործակցելով ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի հետ.

11) քննության են առնում խնամակալների և հոգաբարձուների գործողությունների կամ անգործության մասին դիմումներն ու բողոքները.

12) լուծում են ծնողների միջև երեխայի անվան, ազգանվան վերաբերյալ համաձայնության բացակայության հետևանքով առաջացած տարաձայնությունները.

13) քննարկում են ընտանիքի, կանանց և երեխաների, ինչպես նաև համայնքում կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների վերաբերյալ առկա հիմնախնդիրները.

14) նշանակում են քաղաքացու օգնական (պատրոն) այն չափահաս գործունակ քաղաքացու խնդրանքով և համաձայնությամբ, որը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքները և կատարել պարտականությունները.

15) կատարում են համայնքում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության վիճակի մշտադիտարկում ընդհանուր առմամբ և համայնքում բնակվող այն ընտանիքների հայտնաբերում, որոնցում առկա է երեխայի իրավունքների կամ շահերի խախտման վտանգ և այդ ընտանիքներում ապրող երեխաների իրավիճակի հատուկ մշտադիտարկում սոցիալական աջակցության տարածքային գործակալության կամ բաժնի, հանրակրթական ուսումնական հաստատությունների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի hտm համագործակցությամբ, ընդ որում մշտադիտարկման ժամկետները և հաճախականությունը սահմանվում են ըստ կարիքի ելնելով իրավիճակից, որի մասին ամեն երեխայի համար ընդունվում է առանձին որոշում, իսկ դրանց արդյունքները, ըստ անհրաժեշտության, կարող են ներկայացվել և քննարկվել երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովում.

16) իրականացնում են աշխատանքներ երեխաների իրավունքների խախտումները և շահերի ոտնահարումները կանխարգելելու նպատակով՝ համայնքում երեխաների ու ծնողների հետ, ինչպես նաև խնամք տրամադրող ու կրթական հաստատություններում իրազեկող հանդիպումների և միջոցառումների կազմակերպման ու անցկացման միջոցով այդ նպատակով համագործակցելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի hտm, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ներգրավելով հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և անհատ փորձագետների, ընդ որում, հանդիպումների քանակը, հաճախականությունը, ժամկետները որոշելիս և ծրագրերը կազմելիս հաշվի են առնվում համայնքի կարիքները, առանձնահատկություններն ու երեխաների իրավունքների վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակը.

17) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարան են ներկայացնում երեխայի ու նրա դաստիարակությանը հավակնող անձի (անձանց) կյանքի հետազոտության ակտը և դրա հիման վրա՝ վեճի էության մասին եզրակացությունը.

18) կնքում են՝

ա. գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր իր կողմից նշանակված կառավարչի հետ՝ խնամարկյալի անշարժ և արժեքավոր շարժական գույքի մշտական կառավարման անհրաժեշտության դեպքում,

բ. պայմանագիր խնամատար ծնողների (ծնողի) հետ երեխային խնամատար ընտանիքին հանձնելու մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի N 459-Ն որոշմանը համապատասխան.

19) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքում նշանակում են անհայտ բացակայող ճանաչված անձի գույքի կառավարիչ՝ վերջինիս հետ կնքելով հավատարմագրային կառավարման պայմանագիր.

20) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 45-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքում դիմում են դատարան՝ անձին մահացած ճանաչելու համար.

21) խնամակալին կամ հոգաբարձուին ազատում են իր պարտականությունների կատարումից՝

ա. երեխային իր ծնողներին վերադարձնելու կամ նրան որդեգրելու դեպքում,

բ. խնամարկյալին համապատասխան դաստիարակչական, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանօրինակ այլ հաստատությունում տեղավորելիս, եթե դա չի հակասում խնամարկյալի շահերին,

գ. հարգելի պատճառների (հիվանդություն, գույքային դրության փոփոխություն, խնամարկյալի հետ փոխըմբռնման բացակայություն և այլն) առկայության դեպքում՝ խնամակալի կամ հոգաբարձուի խնդրանքով,

դ. խնամակալի կամ հոգաբարձուի կողմից իր պարտականություններն անպատշաճ կատարելու՝ ներառյալ խնամակալությունը կամ հոգաբարձությունը շահադիտական նպատակներով օգտագործելու կամ խնամարկյալին առանց հսկողության և անհրաժեշտ օգնության թողնելու դեպքերում՝ միաժամանակ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելով նրան օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու համար.

22) երեխայի կյանքին կամ առողջությանն անմիջական վտանգ սպառնալու դեպքում երեխային վերցնում են ծնողներից կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան, անհապաղ ապահովում են երեխայի ժամանակավոր տեղավորումը և 7-օրյա ժամկետում դիմում դատարան՝ ծնողներին (նրանցից մեկին) ծնողական իրավունքներից զրկելու կամ նրանց ծնողական իրավունքները սահմանափակելու հայցով.

23) դիմում են դատարան 14-18 տարեկան երեխայի՝ իր աշխատավարձը, կրթաթոշակը կամ այլ եկամուտներն ինքնուրույն տնօրինելու իրավունքը սահմանափակելու կամ նրան այդ իրավունքից զրկելու միջնորդությամբ.

24) կարգավորում են անչափահաս ծնողների և երեխայի խնամակալի միջև առաջացած տարաձայնությունները.

25) մերձավոր ազգականների հետ երեխային շփվելու հնարավորություն տալուց ծնողների կամ նրանցից մեկի մերժման դեպքում կարող են պարտավորեցնել ծնողներին կամ նրանցից մեկին չխանգարելու այդ շփմանը.

26) օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում են խնամակալների ու հոգաբարձուների.

27) երեխայի ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ ընդունում են որոշում անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (էմանսիպացիա) մասին.

28) ընդունում են որոշում ընտրված երեխային խնամատար ընտանիքին հանձնելու մասին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի N 459-Ն որոշման համաձայն.

29) տալիս են համաձայնություն անչափահաս ծնողների երեխային որդեգրելիս՝ վերջինիս ծնողների կամ խնամակալի (հոգաբարձուի) բացակայության դեպքում.

30) «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված դեպքում կայացնում են որոշում առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղավորելու վերաբերյալ՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) եզրակացության հիման վրա.

31) իրենց գործառույթներն իրականացնելիս հաշվի են առնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշմամբ սահմանված միջգերատեսչական սոցիալական համագործակցության որևէ կողմից ստացված մասնագիտական եզրակացությունը տվյալ խնդրի վերաբերյալ, իսկ այն հաշվի չառնելու դեպքում իրենց որոշման մեջ անդրադառնում են այդ փաստին` նշելով այն հանգամանքները (հիմնավորումները, մրցակցող շահերը և իրավունքները, ուշադրության արժանի այլ հանգամանքներ), որոնք հիմք են հանդիսացել միջգերատեսչական սոցիալական համագործակցության որևէ կողմից ստացված մասնագիտական եզրակացությունը մասամբ կամ ամբողջությամբ հաշվի չառնելու համար, ինչպես նաև կարող են առաջարկել եզրակացության վերանայում կամ այլընտրանքային եզրակացություն` ներկայացված այլ մասնագետի կողմից.

32) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենքներով իրենց վերապահված այլ լիազորություններ:

10. Երեխային բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում տեղավորելու դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմինները շարունակում են երեխային իր կենսաբանական ընտանիք վերադարձնելու կամ խնամակալություն սահմանելու, կամ որդեգրելու, կամ խնամատար ընտանիքում տեղավորելու, իսկ դրանց անհնարինության դեպքում` ընտանեկան միջավայրում որևէ այլ միջոցով խնամք ապահովելու ուղղությամբ աշխատանքները` համագործակցելով Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, իսկ Երևանում` Երևանի քաղաքապետարանի, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների), «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված` աջակցող ցանցի այլ անդամների, ինչպես նաև երեխաներին խնամք տրամադրող` բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների և այլ կազմակերպությունների հետ:

## IV. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

11. Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից ստեղծվում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով (այսուհետ` հանձնաժողով), որը խորհրդակցական մարմին է և գործում է հասարակական հիմունքներով:

12. Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել երեքից մինչև ինն անձ: Հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին որոշումը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին` Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածի համաձայն: Հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշմամբ սահմանվում է նաև հանձնաժողովի նախագահը, ով իր հերթին, հանձնաժողովի կազմից նշանակում է հանձնաժողովի նախագահի տեղակալ և քարտուղար:

13. Հանձնաժողովը կարող է ունենալ աշխատակարգ, որը հաստատվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից:

14. Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել մարզպետարանների (Երևանում` Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) աշխատողներ, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներ, բուժաշխատողներ, համայնքի մանկավարժներ, հոգեբաններ, սոցիալական աշխատանքի մասնագետներ և իրավաբաններ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ):

15. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նիստի օրվանից առնվազն երեք օր առաջ հանձնաժողովի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, վայրի (հասցեն, սենյակը կամ դահլիճը) մասին և համապատասխան տեղեկատվություն է փակցնում տեղական ինքնակառավարման մարմնի նստավայրի հայտարարությունների վահանակին:

16. Հանձնաժողովի նիստը նախապատրաստելու և զեկուցմամբ հանդես գալու համար հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ հանձնաժողովի կազմից նշանակվում է հիմնական զեկուցող:

17. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Հանձնաժողովում քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ ձայների հավասարության դեպքում վճռորոշ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

18. Խնամակալության և հոգաբարձության մարմնի առաջարկով, հանձնաժողովը կազմում ու խնամակալության և հոգաբարձության մարմնին է ներկայացնում քննարկվող հարցի վերաբերյալ համապատասխան եզրակացություն, որն արտացոլում է քննարկվող հարցի վերաբերյալ հանձնաժողովի դիրքորոշումը և ունի բացառապես խորհրդատվական բնույթ: Հանձնաժողովի անդամը հանձնաժողովի ընդհանուր դիրքորոշումից տարբերվող դիրքորոշում ունենալու դեպքում կարող է քննարկվող հարցի վերաբերյալ գրավոր ներկայացնել իր հատուկ դիրքորոշումը (կարծիքը):

19. Հանձնաժողովի նիստերին կարող են ներկա գտնվել այն անձինք, որոնց վերաբերում է քննարկումը, նրանց օրինական ներկայացուցիչները և (կամ) լիազորված անձինք: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հանձնաժողովի նիստերին որպես դիտորդ կարող են ներկա գտնվել նաև հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ այն անձի (անձանց) համաձայնության դեպքում, որին (որոնց) վերաբերում է տվյալ քննարկումը:

20. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են հանձնաժողովի քարտուղարի կողմից: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի՝ նիստին ներկա անդամները: Հանձնաժողովի նիստին ներկա անդամի հատուկ կարծիքը կցվում է արձանագրությանը և համարվում է արձանագրության անբաժանելի մասը: Նիստի արձանագրությունը տրամադրվում է հանձնաժողովի բոլոր անդամներին, իսկ դրա՝ հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից ստորագրված քաղվածքը կարող է տրամադրվել նիստին մասնակցած այլ անձանց կամ նրանց ներկայացուցիչներին:

21. Հանձնաժողովի անդամները մասնակցում են հանձնաժողովի նիստերին, կարող են հարցեր ուղղել զեկուցողին, հանդես գալ առաջարկություններով, հայտնել իրենց դիրքորոշումը քննարկվող հարցերի վերաբերյալ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փող. 2/3
հեռախոս *023332550*
էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2022 թվականի N 20-Ա

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԱՐՄԱՎԻՐ–1» ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-ին մասով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^{3}$ հոդվածով , Հայաստանի Հանրապետությա վարչապետի 2011թվական դեկտեմբերի 22–ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի թիվ 1-5 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Բաղրամյան ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Արմավիր1» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Բաղրամյան համայնքի գլխավոր հատակագծի նախագիծը(գոտիավորման նախագիծը) :

2. Գլխավոր հատակագծով սահմանված՝հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածի 5–րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Հողերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններ( հողամասերի կատեգորյաի տարանսֆորմացիան) գծագրին(այսուհետ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերի համապատասխան համաձայն հավելվածի

3.Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդված 14 և 30–րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում,համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

**Կողմ (19)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (1)**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________________

(Կ.Տ.)

*Հավելված*

*Հայաստանի*
*Հանրապետության*
*Արմավիրի*

*մարզի Բաղրամյան*
*համայնքի ավագանու*

*2022 թվականի մարտի 7*
*-ի*
*Թիվ 2 նիստի N 20-Ա*
*որոշման*

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջնայի (1-5 տարի), միջնաժամկետ (5-10 տարի) և հեռանկարային(10-15 տարի) փոփոխություններ
ըստ գյուղերի

*Արտամետ*

| Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | Հատուկ պահպանվող տարածքների հողերից՝ | | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ՀԷ-1* | *Պատմական և մշ. (գերեզմանոց)* | **1,33** | *Կոմունալ օբյեկտների (գերեզմանոցներ)* | **1,33** |
| *Ընդհանուր* | | **1,33** | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԲԲ-1* | *Բնակելի* | **0,13** | *Հասարակական* | **0,13** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| *ԳՋ-3* | *Վարելահող* | **0.9** | *Լճեր* | **0.9** |
| *ԳՋ-4* | *Վարելահող* | **0.78** | *Լճեր* | **0.78** |
| *ԳՋ-5* | *Այլ հողատեսքեր* | **3.48** | *Լճեր* | **3.48** |
| *ԳՋ-6* | *Այլ հողատեսքեր* | **5.2** | *Լճեր* | **5.2** |
| ***Ընդհանուր*** | | **18.88** | | |
| | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | | | |
| | | | Հատուկ պահպանվող տարածքների | |
| *ԱՀ-1* | *Գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ* | **0.2** | *Պատմական և մշակութային* | **0.2** |
| ***Ընդհանուր*** | | **0.2** | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | |
| *ԳԱ-1* | *Այլ հողատեսքեր* | **2.87** | *Ընդերքի օգտագործման* | **2.87** |
| *ԳԱ-2* | *Արոտ* | **4.29** | *Ընդերքի օգտագործման* | **4.29** |
| *ԳԱ-3* | *Արոտ* | **2.65** | *Ընդերքի օգտագործման* | **2.65** |
| *ԳԱ-4* | *Արոտ* | **6.2** | *Ընդերքի օգտագործման* | **6.2** |
| *ԳԱ-5* | *Այլ հողատեսքեր* | **1.03** | *Ընդերքի օգտագործման* | **1.03** |
| *ԳԱ-6* | *Այլ հողատեսքեր* | **4.8** | *Ընդերքի օգտագործման* | **4.8** |
| ***Ընդհանուր*** | | ***21.84*** | | |
| Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | |
| *ԳԱ-1* | *Այլ հողատեսքեր* | **5** | *Ընդերքի օգտագործման* | **5** |
| *ԳԱ-2* | *Այլ հողատեսքեր* | **0.24** | *Գյուղատնտեսական արտադրական* | **0.24** |
| *ԳԱ-3* | *Այլ հողատեսքեր* | **1** | *Ընդերքի օգտագործման* | **1** |
| *ԳԱ-4* | *Այլ հողատեսքեր* | **1.48** | *Ընդերքի օգտագործման* | **1.48** |
| *ԳԱ-5* | *Այլ հողատեսքեր* | **1.02** | *Ընդերքի օգտագործման* | **1.02** |
| ***Ընդհանուր*** | | ***8.74*** | | |
| Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | նշանակության հողերից՝ | | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ԳԷ-1* | *Արոտ* | 3 | *Կոմունալ ենթակառուցվածքների* | [redacted] |
| ***Ընդհանուր*** | | ***3*** | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | |
| *ԲԱ-1* | *Այլ հողեր* | 0.85 | *Գյուղատնտեսական արտադրական* | 0.85 |
| *ԲԱ-2* | *Այլ հողեր* | 0.42 | *Գյուղատնտեսական արտադրական* | 0.42 |
| ***Ընդհանուր*** | | **1.27** | | |

*Լեռնագոգ*

| Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԲԲ-1* | *Այլ հողեր* | **0.97** | *Բնակելի կառուցապատման* | **0.97** |
| *ԲԲ-2* | *Այլ հողեր* | **1.58** | *Բնակելի կառուցապատման* | **1.58** |
| *ԲԲ-3* | *Այլ հողեր* | **0.42** | *Բնակելի կառուցապատման* | **0.42** |
| *ԲԲ-4* | *Այլ հողեր* | **0.48** | *Բնակելի կառուցապատման* | **0.48** |
| *ԲԲ-5* | *Այլ հողեր* | **0.2** | *Բնակելի կառուցապատման* | **0.2** |
| *ԲԲ-6* | *Այլ հողեր* | **0.29** | *Ընդհանուր օգտագործման* | **0.29** |
| ***Ընդհանուր*** | | **3.94** | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | |
| *ԲԱ-1* | *Հասարակական կառուցապատման* | **8.11** | *Արդյունաբերական օբյեկտների* | **8.11** |
| ***Ընդհանուր*** | | **8.11** | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | |
| *ԳԱ-1* | *Վարելահող* | **0.66** | *Գյուղատնտեսական արտադրական* | **0.66** |
| ***Ընդհանուր*** | | **0.66** | | |
| | Հատուկ պահպանվող տարածքների | | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ՀԷ-1* | *Պատմական և մշակութային (գերեզմանոց)* | **1.51** | *Կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոցներ)* | **1.51** |
| ***Ընդհանուր*** | | **1.51** | | |
| **Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)** | | | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԲԲ-1* | *Այլ հողեր* | 0.8 | *Բնակելի կառուցապատման* | 0.8 |
| *ԲԲ-2* | *Այլ հողեր* | 0.08 | *Բնակելի կառուցապատման* | 0.08 |
| *ԲԲ-3* | *Այլ հողեր* | 0.08 | *Բնակելի կառուցապատման* | 0.08 |
| *ԲԲ-4* | *Այլ հողեր* | 0.09 | *Բնակելի կառուցապատման* | 0.09 |
| *ԲԲ-5* | *Այլ հողեր* | 0.09 | *Բնակելի կառուցապատման* | 0.09 |
| *ԲԲ-6* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-7* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0 |
| ***Ընդհանուր*** | | **1.35** | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | |
| *ԳԱ-1* | *Արոտ* | 4.99 | *Ընդերքի օգտագործման* | 4.99 |
| ***Ընդհանուր*** | | ***4.99*** | | |
| **Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)** | | | | |
| | Գյուղատնտեսական | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | նշանակության հողերից՝ | | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | |
| *ԳԱ-1* | *Արոտ* | 2.65 | *Գյուղատնտեսական արտադրական* | [illegible] |
| *ԳԱ-2* | *Արոտ* | 6.31 | *Գյուղատնտեսական արտադրական* | 6.31 |
| *ԳԱ-3* | *Արոտ* | 5 | *Գյուղատնտեսական արտադրական* | 5 |
| ***Ընդհանուր*** | | ***13.96*** | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ԳԷ-1* | *Արոտ* | [illegible] | *Կոմունալ ենթակառուցվածքների* | [illegible] |
| ***Ընդհանուր*** | | ***1.11*** | | |

*Կողբական*

| Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԲԲ-1* | *Բնակելի կառուցապատման* | **0.11** | *Հասարակական կառուցապատման* | **0.11** |
| *Ընդհանուր* | | **0.11** | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ԳԷ-1* | *Արոտ* | **0.08** | *Էներգետիկայի* | **0.08** |
| *ԳԷ-2* | *Արոտ* | **1.7** | *Կոմունալ ենթակառուցվածքների* | **1.7** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | (գերեզմանոցներ) | |
| Ընդհանուր | | 1.78 | | |
| | Հատուկ պահպանվող տարածքների | | | |
| | | | Գյուղատնտեսական նշանակության | |
| ՀԳ-1 | Պատմական և մշակութային (գերեզմանոց) | 2 | Արոտ | 2 |
| Ընդհանուր | | 2 | | |
| Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի) | | | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| ԲԲ-I | Այլ հողեր | 1.73 | Բնակելի կառուցապատման | [illegible] |
| Ընդհանուր | | 1.73 | | |
| | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերից՝ | | | |
| | | | Գյուղատնտեսական նշանակության | |
| ԱԳ-1 | Ընդերքի օգտագործման | 4.1 | Արոտ | [illegible] |
| Ընդհանուր | | 4.1 | | |
| Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի) | | | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| ԲԲ-I | Այլ հողեր | 0.4 | Բնակելի կառուցապատման | 0.4 |
| Ընդհանուր | | 0.4 | | |

*Հուշակերտ*

| Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| ԳԲ-1 | Այլ հողատեսքեր | 0,68 | Հասարակական | 0,68 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | *կառուցապատման* | |
| ***Ընդհանուր*** | | **0,68** | | |

*Շենիկ*

| Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Գյուղատնտեսական նշանակության | |
| *ԳԳ-1* | *Այլ հողատեսքեր* | **0,54** | *Բազմամյա տնկարկ /պտղատու այգի/* | **0,54** |
| ***Ընդհանուր*** | | **0,54** | | |
| | | | Հատուկ պահպանվող տարածքների | |
| *ԳՀ-1* | *Այլ հողատեսքեր* | **12,2** | *Պատմական և մշակութային (գերեզմանոց)* | **12,2** |
| *ԳՀ-2* | *Արոտ* | **13** | *Պատմական և մշակութային (գերեզմանոց)* | **13** |
| *ԳՀ-3* | *Արոտ* | **43,25** | *Պատմական և մշակութային (գերեզմանոց)* | **43,25** |
| ***Ընդհանուր*** | | **68,45** | | |
| | Հատուկ պահպանվող տարածքների | | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ՀԷ-1* | *Պատմական և մշակութային (գերեզմանոց)* | **0,24** | *կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոցներ)* | **0,24** |
| *ՀԷ-2* | *Պատմական և մշակութային (գերեզմանոց)* | **0,33** | *կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոցներ)* | **0,33** |
| ***Ընդհանուր*** | | **0,57** | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)** | | | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | |
| *ԲԱ-1* | *Այլ հողեր* | 0,14 | *Գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ* | [illegible] |
| ***Ընդհանուր*** | | **0,14** | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԳԲ-1* | *Այլ հողատեսքեր* | 2,39 | *Հասարակական կառուցապատման* | 2,39 |
| ***Ընդհանուր*** | | ***2,39*** | | |
| **Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)** | | | | |
| | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԱԲ-1* | *Գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ* | 0,67 | *Բնակելի կառուցապատման* | 0,67 |
| *ԱԲ-2* | *Գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ* | 0,92 | *Բնակելի կառուցապատման* | 0,92 |
| ***Ընդհանուր*** | | ***1,59*** | | |

***Վանանդ***

| Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Բնակավայրերի | |
| *ԲԲ-1* | *Այլ հողեր* | **0.18** | *Ընդհանուր օգտագործման* | **0.18** |
| *ԲԲ-2* | *Այլ հողեր* | **1.04** | *Բնակելի կառուցապատման* | **1.04** |
| *ԲԲ-3* | *Այլ հողեր* | **0.96** | *Բնակելի կառուցապատման* | **0.96** |
| *Ընդհանուր* | | **2.18** | | |
| | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | | | |
| | | | Գյուղատնտեսական նշանակության | |
| *ԷԳ-1* | *տրանսպորտի* | **12.8** | *Այլ հողատեսքեր* | **12.8** |
| *Ընդհանուր* | | **12.8** | | |
| | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր | | | |
| | | | Գյուղատնտեսական նշանակության | |
| *ԱԳ-1* | *ընդերքի օգտագործման* | **2.29** | *վարելահող* | **2.29** |
| *Ընդհանուր* | | **2.29** | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Ջրային հողեր | |
| *ԳՋ-1* | *վարելահող* | **1.9** | *հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.* | **1.9** |
| *Ընդհանուր* | | **1.9** | | |
| | | | Ջրային հողեր | |
| *ԳԲ-1* | *այլ հողատեսքեր* | **0.02** | *Բնակելի կառուցապատման* | **0.02** |
| *Ընդհանուր* | | **0.02** | | |
| **Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)** | | | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԲԲ-1* | *Բնակելի կառուցապատման* | [illegible] | *Ընդհանուր օգտագործման* | [illegible] |
| *ԲԲ-2* | *Այլ հողեր* | 0.1 | *Ընդհանուր օգտագործման* | 0.1 |
| *ԲԲ-3* | *Այլ հողեր* | 1.85 | *Բնակելի կառուցապատման* | [illegible] |

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Ընդհանուր* | | 1.96 | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր | |
| *ԳԱ-1* | *Արոտ* | 3.36 | *գյուղատնտեսական արտադրական օբյեկտների* | [illegible] |
| *ԳԱ-2* | *Արոտ* | 5.33 | *գյուղատնտեսական արտադրական օբյեկտների* | [illegible] |
| *Ընդհանուր* | | 8.69 | | |
| Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի) | | | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԲԲ-1* | *Այլ հողեր* | 0.89 | *Բնակելի կառուցապատման* | 0.89 |
| *ԲԲ-2* | *Այլ հողեր* | 1.23 | *Բնակելի կառուցապատման* | 1.23 |
| *ԲԲ-3* | *Այլ հողեր* | 0.25 | *Ընդհանուր օգտագործման* | 0.25 |
| *ԲԲ-4* | | 2.37 | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԳԲ-1* | *Այլ հողատեսքեր* | 0.72 | *Բնակելի կառուցապատման* | [illegible] |
| *ԳԲ-2* | *Արոտ* | 9.51 | *Բնակելի կառուցապատման* | [illegible] |
| *ԳԲ-3* | *Այլ հողատեսքեր* | 0.18 | *Ընդհանուր օգտագործման /կանաչ գոտի/* | [illegible] |
| *Ընդհանուր* | | 10.41 | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ԳԷ-1* | *Արոտ* | 1.41 | *Կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոցներ)* | [illegible] |
| *Ընդհանուր* | | 1.41 | | |

*Տալվորիկ*

| Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԲԲ-1* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-2* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-3* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-4* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-5* | *Այլ հողեր* | 0.16 | *Բնակելի կառուցապատման* | 0.16 |
| *ԲԲ-6* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-7* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-8* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-9* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-10* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-11* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-12* | *Այլ հողեր* | 0.11 | *Բնակելի կառուցապատման* | 0.11 |
| *ԲԲ-13* | *Այլ հողեր* | 0.11 | *Բնակելի կառուցապատման* | 0.11 |
| *ԲԲ-14* | *Այլ հողեր* | 0.11 | *Բնակելի կառուցապատման* | 0.11 |
| *ԲԲ-15* | *Այլ հողեր* | 0.11 | *Բնակելի կառուցապատման* | 0.11 |
| *ԲԲ-16* | *Այլ հողեր* | 0.12 | *Բնակելի կառուցապատման* | 0.12 |
| *ԲԲ-17* | *Այլ հողեր* | 0.12 | *Բնակելի կառուցապատման* | 0.12 |
| *ԲԲ-18* | *Այլ հողեր* | 0.12 | *Բնակելի կառուցապատման* | 0.12 |
| *ԲԲ-19* | *Այլ հողեր* | 0.12 | *Բնակելի կառուցապատման* | 0.12 |
| *ԲԲ-20* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-21* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-22* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-23* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-24* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-25* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-26* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-27* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| *ԲԲ-28* | *Այլ հողեր* | 0.1 | *Բնակելի կառուցապատման* | 0.1 |
| ***Ընդհանուր*** | | **2.98** | | |
| Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի) | | | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԲԲ-I* | *Ընդհանուր օգտագործման* | 0.19 | *Հասարակական կառուցապատման* | 0.19 |
| *ԲԲ-2* | *Ընդհանուր օգտագործման* | 0.22 | *Հասարակական կառուցապատման* | 0.22 |
| *ԲԲ-3* | *Ընդհանուր* | 0.88 | *Հասարակական* | 0.88 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | *օգտագործման* | | *կառուցապատման* | |
| *ԲԲ-4* | *Ընդհանուր օգտագործման* | 0.09 | *Հասարակական կառուցապատման* | [illegible] |
| | ***Ընդհանուր*** | **1.38** | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Գյուղատնտեսական նշանակության | |
| *ԳԳ-1* | *Արոտ* | 0.92 | *Այլ հողատեսքեր* | 0.92 |
| *ԳԳ-2* | *Արոտ* | 0.92 | *Բազմամյա տնկարկ /պտղատու այգի/* | 0.92 |
| *ԳԳ-3* | *Արոտ* | 0.3 | *Բազմամյա տնկարկ /պտղատու այգի/* | 0.3 |
| *ԳԳ-4* | *Արոտ* | 0.8 | *Բազմամյա տնկարկ /պտղատու այգի/* | 0.8 |
| *ԳԳ-5* | *Արոտ* | 3.45 | *Բազմամյա տնկարկ /պտղատու այգի/* | 3.45 |
| *ԳԳ-6* | *Վարելահող* | 0.34 | *Բազմամյա տնկարկ /պտղատու այգի/* | 0.34 |
| *ԳԳ-7* | *Վարելահող* | 0.46 | *Բազմամյա տնկարկ /պտղատու այգի/* | 0.46 |
| | ***Ընդհանուր*** | **7.19** | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Ջրային հողեր | |
| *ԳՋ-1* | *Վարելահող* | 0.38 | *ջրամբարներ* | 0.38 |
| *ԳՋ-2* | *այլ հողատեսքեր* | 0.6 | *ջրամբարներ* | 0.6 |
| | ***Ընդհանուր*** | **0.98** | | |
| **Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)** | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԳԲ-1* | *Արոտ* | 0.3 | *Հասարակական կառուցապատման* | 0.3 |
| *ԳԲ-2* | *Արոտ* | 0.11 | *Հասարակական կառուցապատման* | 0.11 |
| *ԳԲ-3* | *Վարելահող* | 0.96 | *Հասարակական կառուցապատման* | 0.96 |
| *ԳԲ-4* | *Վարելահող* | 1.5 | *Հասարակական կառուցապատման* | 1.5 |
| *ԳԲ-5* | *Այլ հողատեսք* | 0.3 | *Հասարակական կառուցապատման* | 0.3 |
| *ԳԲ-6* | *Այլ հողատեսք* | 1.17 | *Հասարակական կառուցապատման* | 1.17 |
| | ***Ընդհանուր*** | **4.34** | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | օբյեկտների հողեր | |
| *ԳԱ-1* | *Վարելահող* | 1.45 | *Գյուղտնտեսական արտադրական* | 1.45 |
| *ԳԱ-2* | *Արոտ* | 2.56 | *Գյուղտնտեսական արտադրական* | 2.56 |
| ***Ընդհանուր*** | | ***4.01*** | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյ. | |
| *ԳԷ-1* | *Արոտ* | 0.68 | *Կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/* | 0.68 |
| *ԳԷ-2* | *Արոտ* | 14.12 | *Էներգետիկայի* | 14.12 |
| ***Ընդհանուր*** | | ***14.8*** | | |

***Քարակերտ***

| Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակություն | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակություն | Մակերեսը (հա) |
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական արտադրական | | | |
| | | | Հատուկ պահպանվող տարածքների | |
| *ԳՀ-1* | *Արոտ* | **1.58** | *Պատմական և մշակութային* | **1.58** |
| ***Ընդհանուր*** | | 1.58 | | |
| | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԱԲ-1* | *Արդյունաբերական օբյեկտների* | **1.13** | *Այլ հողեր* | **1.13** |
| *ԱԲ-2* | *Գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ* | **0.025** | *Բնակելի կառուցապատման* | **0.025** |
| ***Ընդհանուր*** | | 1.155 | | |
| | Հատուկ պահպանվող տարածքների | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ՀԲ-1* | *Պատմական և մշակութային* | **0.05** | *Հասարակական կառուցապատման* | **0.05** |
| ***Ընդհանուր*** | | 0.05 | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ՀԷ-1* | *Պատմական և մշակութային (գերեզմանոց)* | **3.15** | *Կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոցներ)* | **3.15** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| *ՀԷ-2* | *Պատմական և մշակութային (զերեզմանոց)* | **1.01** | *Կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոցներ)* | **1.01** |
| | ***Ընդհանուր*** | **4.16** | | |
| **Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)** | | | | |
| | **Բնակավայրերի հողերից՝** | | | |
| | | | **Բնակավայրերի** | |
| *ԲԲ-1* | *Այլ հողեր* | 0.93 | *Բնակելի կառուցապատման* | 0.93 |
| *ԲԲ-2* | *Այլ հողեր* | 0.27 | *Բնակելի կառուցապատման* | 0.27 |
| *ԲԲ-3* | *Այլ հողեր* | 0.2 | *Հասարակական կառուցապատման* | 0.2 |
| | ***Ընդհանուր*** | ***1.4*** | | |
| | **Գյուղատնտեսական նշանակության հողերից՝** | | | |
| | | | **Բնակավայրերի** | |
| *ԳԲ-1* | *Այլ հողատեսքեր* | 0.13 | *Բնակելի կառուցապատման* | 0.13 |
| *ԳԲ-2* | *Այլ հողատեսքեր* | 1 | *Հասարակական կառուցապատման* | 1 |
| *ԳԲ-3* | *Այլ հողատեսքեր* | 0.49 | *Հասարակական կառուցապատման* | 0.49 |
| *ԳԲ-4* | *Այլ հողատեսքեր* | 0.3 | *Հասարակական կառուցապատման* | 0.3 |
| *ԳԲ-5* | *Այլ հողատեսքեր* | 0.22 | *Հասարակական կառուցապատման* | 0.22 |
| | ***Ընդհանուր*** | ***2.14*** | | |
| **Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)** | | | | |
| | **Բնակավայրերի հողերից՝** | | | |
| | | | **Բնակավայրերի** | |
| *ԲԲ-1* | *Ընդհանուր օգտագործման* | 4.76 | *Խառը կառուցապատման* | 4.76 |
| | ***Ընդհանուր*** | ***4.76*** | | |
| | **Գյուղատնտեսական նշանակության հողերից՝** | | | |
| | | | **Բնակավայրերի** | |
| *ԳԲ-1* | *Այլ հողատեսքեր* | 2.5 | *Հասարակական կառուցապատման* | 2.5 |
| *ԳԲ-2* | *Այլ հողատեսքեր* | 4 | *Հասարակական կառուցապատման* | 4 |
| | ***Ընդհանուր*** | ***6.5*** | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտ. նշ. օբյեկտների | |
| *ԳԱ-1* | *Այլ հողատեսքեր* | **0.04** | *Գյուղատնտեսական արտադրական* | **0.04** |
| | ***Ընդհանուր*** | **0.04** | | |
| | Հատուկ պահպանվող տարածքների հողերից՝ | | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ՀԷ-1* | *Պատմական և մշակութային (գերեզմանոց)* | **0.24** | *Կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոցներ)* | **0.24** |
| | ***Ընդհանուր*** | **0.24** | | |
| | **Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)** | | | |
| | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերից՝ | | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտ. նշ. օբյեկտների | |
| *ԷԱ-I* | *Կոմունալ ենթակառուցվածքների* | 0.35 | *Գյուղատնտեսական արտադրական* | 0.35 |
| | ***Ընդհանուր*** | ***0.35*** | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԲԲ-1* | *Այլ հողեր* | 0.19 | *Հասարակական կառուցապատման* | 0.19 |
| | ***Ընդհանուր*** | ***0.19*** | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Հատուկ պահպանվող տարածքների | |
| *ԳՀ-1* | *Արոտ* | 0.23 | *Պատմական և մշակութային օբյեկտներ* | 0.23 |
| | ***Ընդհանուր*** | ***0.23*** | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | արտ. նշ. օբյեկտների | |
| *ԳԱ-1* | *Վարելահող* | 5.67 | *Ընդերքի օգտագործման* | 5.67 |
| *ԳԱ-2* | *Արոտ* | 4.54 | *Գյուղատնտեսական արտադրական* | 4.54 |
| ***Ընդհանուր*** | | **10.21** | | |
| **Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)** | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ԳԷ-1* | *Արոտ* | 2.76 | *Կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոցներ)* | 2.76 |
| *ԳԷ-2* | *Արոտ* | 1 | *Կոմունալ օբյեկտների* | 1 |
| ***Ընդհանուր*** | | **3.76** | | |
| | | | Ջրային հողեր | |
| *ԳՋ-1* | *Արոտ* | 3.64 | *հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.* | 3.64 |
| *ԳՋ-2* | *Արոտ* | 0.12 | *հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.* | 0.12 |
| *ԳՋ-3* | *Այլ հողատեսքեր* | 0.17 | *հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.* | 0.17 |
| *ԳՋ-4* | *Արոտ* | 0.65 | *հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.* | 0.65 |
| ***Ընդհանուր*** | | **4.58** | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտ. նշ. օբյեկտների | |
| *ԳԱ-1* | *Արոտ* | 1.44 | *Գյուղատնտեսական արտադրական* | 1.44 |
| ***Ընդհանուր*** | | **1.44** | | |

***Դալարիկ***

| Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| **Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)** | | | | |
| | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերից՝ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Բնակավայրերի | |
| *ԷԲ-1* | *Կոմունալ ենթակառուցվածքների* | **0,13** | *Հասարակական կառուցապատման* | **0,13** |
| ***Ընդհանուր*** | | **0,13** | | |
| | Հատուկ պահպանվող տարածքների | | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ՀԷ-1* | *Պատմական և մշակութային (գերեզմանոց)* | **11,27** | *Կոմունալ օբյեկտների (գերեզմանոցներ)* | **11,27** |
| ***Ընդհանուր*** | | **11,27** | | |
| **Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)** | | | | |
| | Հատուկ նշանակության օբյեկտների հողերից՝ | | | |
| | | | Գյուղատնտեսական նշանակության | |
| *ՀնԳ-I** | *Հատուկ նշանակության* | 10,03 | *Արոտ* | 10,03 |
| ***Ընդհանուր*** | | ***10,03*** | | |
| | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ. արտ. նշ. օբյեկտների հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԱԲ-1* | *Գյուղատնտեսական արտադրական* | 0,13 | *Հասարակական կառուցապատման* | [illegible] |
| ***Ընդհանուր*** | | ***0,13*** | | |
| **Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)** | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ԳԷ-I* | *Այլ հողատեսքեր* | **0,65** | *Կոմունալ օբյեկտների* | 0,65 |
| ***Ընդհանուր*** | | ***0,65*** | | |

*_Հատուկ նշանակության հողատեսքի տրանսֆորմացիան կատարվել է հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 1998թ. համապատասխան որոշումը

***Երվանդաշատ***

| Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԲԲ-1* | *Այլ հողեր* | 0.21 | *Բնակելի կառուցապատման* | 0.21 |
| *ԲԲ-2* | *Այլ հողեր* | 0.09 | *Բնակելի կառուցապատման* | 0.09 |
| *ԲԲ-3* | *Հասարակական կառուցապատման* | 0.07 | *Բնակելի կառուցապատման* | 0.07 |
| *ԲԲ-4* | *Հասարակական կառուցապատման* | 0.56 | *Բնակելի կառուցապատման* | 0.56 |
| ***Ընդհանուր*** | | 0.93 | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Հատուկ պահպանվող տարածքների | |
| *ԳՀ-1* | *Այլ հողատեսքեր* | 15.47 | *Պատմական և մշակութային* | 15.47 |
| *ԳՀ-2* | *Վարելահող* | 0.55 | *Պատմական և մշակութային* | 0.55 |
| *ԳՀ-3* | *Արոտ* | 1 | *Պատմական և մշակութային* | 1 |
| *ԳՀ-4* | *Այլ հողատեսքեր* | 0.5 | *Պատմական և մշակութային* | 0.5 |
| *ԳՀ-5* | *Արոտ* | 1.79 | *Պատմական և մշակութային* | 1.79 |
| *ԳՀ-6* | *Այլ հողատեսքեր* | 1.58 | *Պատմական և մշակութային* | 1.58 |
| *ԳՀ-7* | *Արոտ* | 1.05 | *Պատմական և մշակութային* | 1.05 |
| *ԳՀ-8* | *Այլ հողատեսքեր* | 5.02 | *Պատմական և մշակութային* | 5.02 |
| ***Ընդհանուր*** | | 26.96 | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների | |
| *ԳԱ-1* | *Այլ հողատեսքեր* | 0.18 | *Գյուղատնտեսական արտադրական* | 0.18 |
| ***Ընդհանուր*** | | 0.18 | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԳԲ-1* | *Այլ հողատեսքեր* | 1.86 | *Հասարակական կառուցապատման* | 1.86 |
| *ԳԲ-2* | *Արոտ* | 0.85 | *Բնակելի կառուցապատման* | 0.85 |
| ***Ընդհանուր*** | | 2.71 | | |
| | | | Ջրային հողեր | |
| *ԳՋ-1* | *Այլ հողատեսքեր* | 5.49 | *Լճեր* | 5.49 |
| *ԳՋ-2* | *Այլ հողատեսքեր* | 3.03 | *Լճեր* | 3.03 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Ընդհանուր* | | **10** | | |
| | | | Գյուղատնտեսական նշանակության | |
| *ԳԳ-1* | *Արոտ* | 20 | *Բազմամյա տնկարկ* | [illegible] |
| *ԳԳ-2* | *Արոտ* | [illegible] | *Վարելահող* | [illegible] |
| *Ընդհանուր* | | ***229.23*** | | |
| | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտ. նշ. օբյեկտներ հողերից՝ | | | |
| | | | Գյուղատնտեսական նշանակության | |
| *ԱԳ-1* | *Գյուղատնտեսական արտադրական* | 4.2 | *Այլ հողատեսքեր* | 4.2 |
| *Ընդհանուր* | | ***4.2*** | | |
| Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ԳԷ-1* | *Արոտ* | 0.6 | *Կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոցներ)* | 0.6 |
| *Ընդհանուր* | | ***0.6*** | | |

*Բաղրամյան /Բաղրամյանի շրջ/*

| Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԲԲ-1* | *Այլ հողեր* | 0.09 | *Հասարակական կառուցապատման* | 0.09 |
| *ԲԲ-2* | *Այլ հողեր* | 0.04 | *Հասարակական կառուցապատման* | 0.04 |
| *Ընդհանուր* | | 0.13 | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Հատուկ պահպանվող տարածքների | |
| *ԳՀ-1* | *Արոտ* | **17.37** | *Պատմական և մշակութային* | **17.37** |
| *ԳՀ-2* | *Արոտ* | **3.45** | *Պատմական և մշակութային* | **3.45** |
| *ԳՀ-3* | *Արոտ* | **2.29** | *Պատմական և մշակութային* | **2.29** |
| *ԳՀ-4* | *Արոտ* | **4.81** | *Պատմական և մշակութային* | **4.81** |
| *ԳՀ-5* | *Արոտ* | **1.85** | *Պատմական և մշակութային* | **1.85** |
| *ԳՀ-6* | *Այլ հողատեսքեր* | **9.91** | *Պատմական և մշակութային* | **9.91** |
| *ԳՀ-7* | *Այլ հողատեսքեր* | **1.59** | *Պատմական և մշակութային* | **1.59** |
| *ԳՀ-8* | *Այլ հողատեսքեր* | **6.27** | *Պատմական և մշակութային* | **6.27** |
| ***Ընդհանուր*** | | **47.54** | | |
| | Հատուկ պահպանվող տարածքների | | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ՀԷ-1* | *Պատմական և մշակութային (գերեզմանոց)* | **0.75** | *Կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոցներ)* | **0.75** |
| *ՀԷ-2* | *Պատմական և մշակութային (գերեզմանոց)* | **0.48** | *Կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոցներ)* | **0.48** |
| ***Ընդհանուր*** | | **1.23** | | |
| Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտ. նշ. օբյեկտներ | |
| *ԳԱ-1* | *Արոտ* | [illegible] | *Գյուղատնտեսական արտադրական* | [illegible] |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | *կառուցապատման* | | *կառուցապատման* | |
| ***Ընդհանուր*** | | **0,13** | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԳԲ-1* | *Այլ հողատեսքեր* | **0,03** | *Ընդհանուր օգտագործման* | **0,03** |
| *ԳԲ-2* | *Այլ հողատեսքեր* | **0,07** | *Ընդհանուր օգտագործման* | **0,07** |
| *ԳԲ-3* | *Այլ հողատեսքեր* | **0,36** | *Հասարակական կառուցապատման* | **0,36** |
| *ԳԲ-4* | *Այլ հողատեսքեր* | **1** | *Հասարակական կառուցապատման* | **1** |
| ***Ընդհանուր*** | | **1,46** | | |
| | | | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և արտ. այլ նշ. օբյեկտներ | |
| *ԳԱ-1* | *Արոտ* | **0,5** | *Գյուղատնտեսական արտադրական* | **0,5** |
| ***Ընդհանուր*** | | **0,5** | | |
| | | | Ջրային հողեր | |
| *ԳՋ-1* | *Վարելահող* | **0,16** | *Հիդրոտեխնիկական, ջրատնտեսային և այլ օբյեկտներ* | **0,16** |
| ***Ընդհանուր*** | | **0,16** | | |
| Միջնաժամկեր միջոցառումներ (5-10 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԳԲ-1* | *Այլ հողատեսքեր* | 1,39 | *Բնակելի կառուցապատման* | [illegible] |
| *ԳԲ-2* | *Այլ հողատեսքեր* | 0,77 | *Բնակելի կառուցապատման* | [illegible] |
| *ԳԲ-3* | *Այլ հողատեսքեր* | [illegible] | *Բնակելի կառուցապատման* | 0,3 |
| *ԳԲ-4* | *Այլ հողատեսքեր* | 5,44 | *Բնակելի կառուցապատման* | 5,44 |
| *ԳԲ-5* | *Այլ հողատեսքեր* | 2,12 | *Բնակելի կառուցապատման* | 2,12 |
| *ԳԲ-6* | *Այլ հողատեսքեր* | 0,1 | *Ընդհանուր օգտագործման* | 0,1 |
| *ԳԲ-7* | *Այլ հողատեսքեր* | 0,3 | *Ընդհանուր օգտագործման* | [illegible] |
| *ԳԲ-8* | *Այլ հողատեսքեր* | 0,78 | *Ընդհանուր օգտագործման* | 0,78 |
| ***Ընդհանուր*** | | ***11,2*** | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ԳԷ-1* | *Այլ հողատեսքեր* | 1 | *Էներգետիկայի* | 1 |
| *Ընդհանուր* | | **1** | | |
| Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԳԲ-1* | *Այլ հողատեսքեր* | 0,53 | *Ընդհանուր օգտագործման* | 0,53 |
| *ԳԲ-2* | *Այլ հողատեսքեր* | 3,7 | *Բնակելի կառուցապատման* | 3,7 |
| *ԳԲ-3* | *Այլ հողատեսքեր* | 1,61 | *Բնակելի կառուցապատման* | 1,61 |
| *Ընդհանուր* | | **5,84** | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | |
| *ԳԷ-1* | *Արոտ* | 1 | *Կոմունալ օբյեկտների* | 1 |
| *Ընդհանուր* | | **1** | | |

*Արևադաշտ*

| Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | Հատուկ պահպանվող տարածքների հողերից՝ | | | |
| | | | Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների | |
| *ՀԷ-1* | *Պատմական և մշակութային (գերեզմանոց)* | **0.81** | *Կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոց)* | **0.81** |
| *Ընդհանուր* | | **0.81** | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Հատուկ պահպանվող տարածքների | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| *ԳՀ-1* | *Արոտ* | **3.78** | *Պատմական և մշակութային* | **3.78** |
| | ***Ընդհանուր*** | **3.78** | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԲԲ-1* | *Այլ հողեր* | **0.88** | *Բնակելի կառուցապատման* | **0.88** |
| *ԲԲ-2* | *Այլ հողեր* | **0.21** | *Ընդհանուր օգտագործման,* | **0.21** |
| | ***Ընդհանուր*** | **1.09** | | |
| Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԳԲ-1* | *Այլ հողատեսքեր* | 2.3 | *Հասարակական կառուցապատման* | 2.3 |
| *ԳԲ-2* | *Այլ հողատեսքեր* | 0.12 | *Ընդհանուր օգտագործման* | 0.12 |
| *ԳԲ-3* | *Այլ հողատեսքեր* | 0.09 | *Ընդհանուր օգտագործման* | 0.09 |
| | ***Ընդհանուր*** | **2.51** | | |
| Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԳԲ-I* | *Այլ հողատեսքեր* | 0.3 | *Հասարակական կառուցապատման* | 0.3 |
| | ***Ընդհանուր*** | ***0.3*** | | |

***Բացարան***

| Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | Գյուղատնտեսական նշանակության հողերից՝ | | | |
| | | | Ջրային հողեր | |
| *ԳՋ-1* | *Արոտ* | **0.14** | *Լճեր* | **0.14** |
| *ԳՋ-2* | *Արոտ* | **0.22** | *Լճեր* | **0.22** |
| *ԳՋ-3* | *Արոտ* | **0.1** | *Ջրամբարներ* | **0.1** |
| | ***Ընդհանուր*** | **0.46** | | |
| | Բնակավայրերի հողերից՝ | | | |
| | | | Բնակավայրերի | |
| *ԲԲ-1* | *Հասարակական կառուցապատման* | **0.31** | *Բնակելի կառուցապատման /բազմաբնակարան/* | **0.31** |
| | ***Ընդհանուր*** | **0.31** | | |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փող. 2/3
հեռախոս 023332550
Էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2022 թվականի N 21-Ա

## «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Բաղրամյան ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Սահմանել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ** (14) **Դեմ** (0) **Ձեռնպահ** (1)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________________ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Կ.Տ.)

Հավելված
Բաղրամյան համայնքի ավագանու
«07» մարտի 2022 թվականի
N 21-Լ որոշման

# ԿԱՐԳ
# ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման հետ կապված հարաբերությունները:
2. Բաղրամյան համայնքի աշխատակազմը պարտավոր է պահել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման միասնական էլեկտրոնային մատյան (այսուհետ՝ մատյան):
3. Մատյանում ըստ հերթականության լրացվում են՝
   1) նորմատիվ իրավական ակտի հաշվառման հերթական համարը.
   2) նորմատիվ իրավական ակտն ընդունող մարմինը.
   3) նորմատիվ իրավական ակտի տեսակը.
   4) նորմատիվ իրավական ակտի վերնագիրը.
   5) նորմատիվ իրավական ակտի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը.
   6) նորմատիվ իրավական ակտի հերթական համարը.
   7) նորմատիվ իրավական ակտի ստորագրման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը.
   8) նորմատիվ իրավական ակտի հրապարակման, դրա ուժի մեջ մտնելու տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը.
   9) նորմատիվ իրավական ակտի գործողության դադարեցման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը:
   10) նորմատիվ իրավական ակտի նախագիծը պետական-իրավական փորձաքննության ուղարկելու տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը,
   11) նորմատիվ իրավական ակտի նախագծի մասին պետական-իրավական փորձագիտական եզրակացություն տալու տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, իսկ օրենքով սահմանված ժամկետներում փորձագիտական եզրակացություն չտրամադրելու դեպքում՝ նշում այդ մասին:

4.Պետական-իրավական փորձաքննության ոչ ենթակա համայնքային բյուջեների վերաբաշխման, դրանում առաջարկվող փոփոխությունների, ինչպես նաև բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների վերաբերյալ համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը միասնական էլեկտրոնային մատյանում հաշվառելիս սույն կարգի 3-րդ կետի 10-րդ և 11-րդ ենթակետերով պահանջվող տեղեկատվությունը չի նշվում:

5. Մատյաններում կարող են նախատեսվել նաև այլ նշումներ:

6. Մատյանի հաշվառման համարների հերթականությունը վերսկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:

7. Մատյանում նշումները պետք է կատարվեն առանց կրճատումների:

8. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը հաշվառվում, այնուհետև սահմանված կարգով արխիվացվում և պահպանվում են համայնքի աշխատակազմի արխիվում, իսկ սահմանված ժամկետների ավարտից htmn մշտական պահպանության t հանձնվում պետական կամ համայնքային արխիվ:

9. Սույն կարգը տարածվում է նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ներքին (լոկալ) և անհատական իրավական ակտերի հաշվառման և պահպանման վրա:

10. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման մատյանից տեղեկություններ կարող են տրամադրվել իրավաբանական և ֆիզիկական անձանց: Մատյանից գրավոր տեղեկություններ կարող են տրվել առձեռն, փոստով, ինչպես նաև էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

11. Մատյանից տեղեկություններ տալու համար համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և չափով կարող է գանձվել տեղական վճար:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ**

**1. Կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը.**

Համայնքի ավագանու որոշման նախագծի տիպային տարբերակով առաջարկվում է սահմանել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը:

**2. Առկա իրավիճակը.**

2018 թվականի մարտի 21-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք), որով ուժը կորցրած ճանաչվեց 2002 թվականի ապրիլի 3-ին ընդունված «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Մասնավորապես, նոր օրենքի մշակման և ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր **2015 թվականին իրականացված Սահմանադրական փոփոխություններով,** ինչպես նաև օրենսդրական գործընթացի բարեփոխման վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2014 թվականի «Օրենսդրական գործընթացի գնահատումը Հայաստանում» զեկույցում տեղ գտած բազմաթիվ առաջարկությունների հիման վրա ι իրավակարգավորումներ մշակելու անհրաժեշտությամբ: Նշվածի համատեքստում Օրենքում ներառվել են ոչ միայն սահմանադրական բարեփոխումների լույսի ներքո անհրաժեշտ համապատասխանեցման իրավակարգավորումներ, այլև հայեցակարգային նոր ինստիտուտներ և դրանից բխող նոր իրավակարգավորումներ:

Ի տարբերություն նախորդ՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Օրենքի կարգավորման շրջանակը սահմանափակվել է **միայն նորմատիվ իրավական ակտերի** հանրային քննարկման, կարգավորման ազդեցության գնահատման, փորձաքննության, ուժի մեջ մտնելու, հրապարակման, հաշվառման և պահպանման, գործողության, փոփոխման, լրացման և գործողության դադարեցման, ինչպես նաև իրավական հակասությունների (իրավական կոլիզիաների) և օրենսդրական բացերի դեպքում իրավական ակտերի նորմերի կիրառման, մեկնաբանման, պարզաբանման htm կապված հարաբերությունների կարգավորմամբ, ինչպես նաև օրենսդրական տեխնիկայի կանոնների սահմանմամբ: Նման մոտեցման որդեգրման համար հիմք է

հանդիսացել 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ ամրագրված այն կարգավորումը, համաձայն որի՝ **Սահմանադրությամբ ամրագրված մարմինների կամ անձանց շրջանակին է իրավունք վերապահված ընդունելու նորմատիվ իրավական ակտեր:**

Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմիններին՝ համայնքի ավագանուն և համայնքի ղեկավարին, ապա հարկ է նկատի ունենալ, որ **և՛ համայնքի ավագանին, և՛ համայնքի ղեկավարը Սահմանադրությամբ կամ օրենքով լիազորված են ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:** Այսպես՝

1) Սահմանադրության 182-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով ընդունում է **ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր,** որոնք ենթակա են կատարման համայնքի տարածքում: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կատարում է համայնքի ավագանու որոշումները և պատասխանատու է համայնքի ավագանու առջև:
2) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մի շարք հոդվածների կարգավորումների համակարգային վերլուծությանից պարզ է դառնում, որ **օրենքով** համայնքի ղեկավարը նույնպես լիազորվել է **ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր**: Մասնավորապես.

   ա) Նշված օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքի (իսկ 2022 թվականի հունվարի 1-ից htmn համայնքը՝ անկախ բնակչության քանակից) պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ առնվազն պետք է առկա լինի **համայնքի ղեկավարի և ավագանու ընդունած նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև նշված ակտերի նախագծերը:**

   բ) Նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **համայնքի ղեկավարը նորմատիվ իրավական ակտեր ընդունելուց htmn** պարտավոր է երկօրյա ժամկետում այն ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի ու մատչելի տեղում: Պաշտոնական համացանցային կայք ունեցող համայնքներում համայնքի ղեկավարի նորմատիվ ակտերը երկօրյա ժամկետում տեղադրվում են կայքում:

Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ թեև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով համայնքի ղեկավարը լիազորվել է ընդունելու **ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ,** այնուամենայնիվ, համայնքի ղեկավարի կողմից ընդունվող ակտերի գերակշիռ մասը

**անհատական կամ ներքին (լոկալ) բնույթ ունեն**: Շատ դեպքերում իրավական ակտի կամ դրանով կարգավորվող հասարակական հարաբերությունների բնույթը ոչ ճիշտ գնահատելու հետևանքով իրականում **անհատական կամ ներքին (լոկալ) բնույթ ունեցող** իրավական ակտն ընդունվում և հրապարակվում է համայնքի ղեկավարի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի տեսքով:

Օրենքով առաջարկվող համակարգային փոփոխություններից է **նորմատիվ իրավական ակտերի գրանցման, հաշվառման ինստիտուտի վերանայումը**: Անցում կատարելով նորմատիվ իրավական ակտերի հրապարակման բացառապես էլեկտրոնային եղանակին՝ **դրանց գրանցման անհրաժեշտությունը վերանում է:** Արդարադատության նախարարությունը նորմատիվ իրավական ակտերի պետական գրանցման գործառույթ այլևս չի իրականացնում: Իրավասու մարմինը ուղարկելով նորմատիվ իրավական ակտը էլեկտրոնային հրապարակման՝ այդպիսով **ինքնաշխատ կերպով նաև գրանցում է ակտն այդ համակարգում:**

Նորմատիվ իրավական ակտերի հաշվառման ինստիտուտը Օրենքով նույնպես վերանայվել է: Նախկինում, ի կատարումն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի, որի համաձայն. *«Իրավական ակտ ընդունող մարմինները պարտավոր են պահել իրենց ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան: Իրավական ակտերի հաշվառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:»*, 2002 թվականի հուլիսի 11-ի Կառավարությունն ընդունել էր «Հասարակության իրավական ակտերի մասին իրազեկման եվ իրավական ակտերի հաշվառման կարգերը հաստատելու մասին» N 1146-Ն **որոշումը**, որով էլ առաջնորդվում էին իրավական ակտ ընդունող մարմինները, ներառյալ՝ տեղական ինքնակառավարման մարմինները: Նշված որոշումն ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 773-Ն որոշմամբ:

Գործող Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն ընդունող մարմինը **պարտավոր է սահմանված կարգով իրականացնել իր կողմից ընդունված իրավական ակտերի ներքին հաշվառում և պահպանում**: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերի հաշվառումը և պահպանումն իրականացվում են **ընդունող մարմնի սահմանած կարգով:** Հետևաբար, յուրաքանչյուր նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն ունեցող յուրաքանչյուր մարմին, պետք է ընդունի նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգ:

Պետական կառավարման համակարգի մի քանի մարմիններ ներկայումս ունեն այդպիսի հաստատած կարգ, օրինակ՝ ՀՀ կառավարությունը, Արդարադատության նախարարությունը:

ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 20-ի N 757-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը», որի համաձայն՝ ՀՀ վարչապետի աշխատակազմում վարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման **<u>մեկ միասնական էլեկտրոնային մատյան:</u>** Նշված կարգը տարածվում է նաև **Հայաստանի Հանրապետության վարչապետի և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի** կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման վրա:

ՀՀ արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 30-ի N 390-Լ հրամանով հաստատված կարգի համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմը **ՀՀ արդարադատության նախարարի** կողմից ընդունած նորմատիվ իրավական ակտերի հաշվառումն ու պահպանումը նույնպես իրականացվում է **<u>էլեկտրոնային մատյանի միջոցով:</u>**

Հաշվի առնելով Օրենքի վերոնշյալ պահանջը՝ անհրաժեշտություն է առաջացել մշակելու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը սահմանող համայնքի ավագանու որոշման նախագծի տիպային տարբերակ, որը հասանելի կլինի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքէջում և համայնքներին կառաջարկվի օգտվել մշակված համայնքի ավագանու որոշման նախագծի տիպային տարբերակից:

**3. Կարգավորման նպատակները, ակնկալվող արդյունքը.**

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգի ընդունումը հնարավորություն կընձեռի համայնքների աշխատակազմերին իրականացնելու համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի պատշաճ հաշվառում և պահպանում:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ ժամանակակից իրավահարաբերությունները պահանջում են արդիական մոտեցումներ՝ իրավական ակտերի կիրառելիությունը և հասանելիությունն առավելագույնս ապահովելու համար, ինչպես նաև հաշվի առնելով, որ Օրենքով սահմանվել է, որ, այսուհետ, նորմատիվ իրավական ակտերը ՀՀ

արդարադատության նախարարության կողմից վարվող նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում գրանցվում և հրապարակվում են **էլեկտրոնային եղանակով,** լիովին արդարացված ենք համարում նաև համայնքների աշխատակազմերի կողմից համընդհանուր մոտեցման որդեգրումը՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի հաշվառումն ու պահպանումն իրականացնելով **բացառապես էլեկտրոնային եղանակով**:

Համայնքի աշխատակազմը համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը հաշվառելու է առանձին էլեկտրոնային մատյաններում: Համայնքի աշխատակազմի կողմից վարվող էլեկտրոնային մատյաններում ըստ հերթականության լրացվելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի վավերապայմանները, հրապարակման, ուժի մեջ մտնելու և գործողության դադարեցման ժամկետները, ինչպես նաև պարտադիր փորձաքննության ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի դեպքում նաև այդ ակտերի նախագծերը պետական-իրավական փորձաքննության ուղարկելու և փորձագիտական եզրակացությունը ստանալու տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը: Սահմանված ժամկետներում պետական-իրավական փորձագիտական եզրակացություն չստանալու դեպքում նշում է կատարվելու այդ մասին: Մատյաններում կարող են նախատեսվել նաև այլ նշումներ:

Մատյաններում նշումները պետք է կատարվեն առանց կրճատումների: Յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի երկրորդ տասնօրյակից htmn մատյանների յուրաքանչյուր էջ հաստատվում է աշխատակազմի քարտուղարի էլեկտրոնային ստորագրությամբ, որից htmn փաստաթղթում նոր գրառումներ չի թույլատրվում կատարել: Մատյանների հաշվառման համարների հերթականությունը վերսկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:

Նորմատիվ իրավական ակտերի հաշվառման մատյաններից գրավոր տեղեկություններ կարող են տրամադրվել իրավաբանական և ֆիզիկական անձանց: Մատյաններից գրավոր տեղեկություններ կարող են տրվել առձեռն, փոստով, ինչպես նաև էլեկտրոնային կապի այլ միջոցներով: Մատյանից տեղեկություններ տալու համար համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և չափով կարող է գանձվել տեղական վճար ( համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար փոխհատուցման վճար):

Սույն կարգը տարածվելու է նաև համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից ընդունված **ներքին և անհատական իրավական ակտերի հաշվառման վրա,** որի համար վարվում են առանձին էլեկտրոնային մատյաններ:

Հաշվի առնելով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման հետ կապված հարաբերությունների բնույթը՝ առաջարկվում է որպեսզի կարգը հաստատվի **համայնքի ավագանու ներքին (լոկալ) ակտի տեսքով:**

**4. Նախագծի մշակման գործընթացքում ներգրավված ինստիտուտները.**

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը սահմանող համայնքի ավագանու որոշման նախագծի տիպային տարբերակը մշակվել է Եվրոպայի խորհրդի հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող «Հայաստանի համայնքների միության ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում և Հայաստանում թափանցիկ և մասնակցային տեղական ինքնակառավարման խթանում» ծրագրի շրջանակներում:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փող. 2/3
հեռախոս 023332550
Էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07»մարտի 2022 թվականի թիվ 2 նիստի N 22-Ն

## «ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով ***Բաղրամյան համայնքի ավագանին որոշում է.***

1. Սահմանել Բաղրամյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (1)**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________________

(Կ.Տ.)

Հավելված
Բաղրամյան համայնքի ավագանու
«07»մարտի 2022 թվականի

Հավելված
Բաղրամյան համայնքի ավագանու
«07»մարտի 2022 թվականի
N 22-Ն որոշման

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1 Սույն չափորոշիչներով սահմանվում են Բաղրամյան համայնքում (wjunthbm' համայնք) սոցիալական ... կցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման հետ կապված հիմնադրույթները և կարգավորումները, ... ցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն (այսուհետ՝ ...) կարգավորումները, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար ...յողից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ... կարգը, աջակցություն ստանալու համար դիմած անձի (ընտանիքի) կարիքների գնահատման չափորոշիչները և դրանց համապատասխան միավորները, ընտանիքի կարիքների գնահատման թերթիկի ձևը և սոցիալական աջակցություն տրամադրելու մասին դիմումի ձևը:

2. Համայնքի ղեկավարը ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով (wjunthbm' հանձնաժողով):

3 Հանձնաժողովում ընդգրկվում են՝

- ...մայնքի ավագանու մինչև երեք անդամ,
- ...ոչ առևտրային կազմակերպություններից (առկայության դեպքում) մինչև երկու անդամ,
- ...ող (հաստիքի առկայության դեպքում),
- ...տարանի աշխատակազմից մինչև երեք աշխատող

...ամայնքներում որտեղ առկա չեն համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ և (կամ) սոցիալական աշխատողի հաստիք, ապա համայնքապետարանի աշխատակազմից մինչև 5 անդամ):

4. Հանձնաժողովում կարող են ընդգրկվել այդպիսի ցանկություն հայտնած՝ համայնքի բնակիչ հանդիսացող շահագրգիռ քաղաքացիական հասարակության մինչև հինգ ներկայացուցիչներ:

5. Հանձնաժողովի ձևավորման մասին հայտարարությունը՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից տեղադրվում է

համայնքի պաշտոնական կայքում և փակցվում է համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:

6. Սույն կարգի 5-րդ կետով նախատեսված հայտարարությունը հրապարակվելուց հետո 10 օրվա ընթացքում Հանձնաժողովի կազմում ընդգրկվելու ցանկություն ունեցող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են դիմել համայնքապետարանի աշխատակազմ:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված ժամկետը բաց թողնելուց htmn, ստացված դիմումները համայնքապետարանի կողմից ենթակա չեն ընդունման և քննարկման:

8. Համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ:

9. Հանձնաժողովի նախագահը նշանակվում է ռոտացիոն կարգով՝ նշանակվելու պահից մեկ տարի ժամկետով:

10. Հանձնաժողովի քարտուղար է նշանակվում համայնքի սոցիալական աշխատողը (հաստիքի առկայության դեպքում):

11. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է սույն չափորոշիչներով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

12. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են իրավիճակային լուծումներ պահանջող որոշումներ և կազմվում եզրակացություններ:

13. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (առկայության դեպքում) տնօրենները՝ անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուրն իր գործառույթների շրջանակներում, պարտավոր են աջակցել հանձնաժողովի աշխատանքներին:

## II. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

14. Աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.

1) համայնքի բնակիչները,

2)համայնքում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունները,

3) շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

15. Դիմումը (Տե՛ս ***Ձև 2***-ում) ներկայացվում է համայնքապետարանի աշխատակազմի աշխատակցին անձամբ կամ լիազորված անձի միջոցով (լիազորագիրը կցվում է դիմումին):

16. Էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված դիմումը հնարավոր է ուղարկել նաև համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով: Դիմումի հետ ներկայացվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը (տես՝ Ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր բաժինը)՝ համայնքապետարանի պաշտոնական կայքի միջոցով:

17. Դիմումին կամ գրությանը կցվում են սոցիալական վիճակը հավաստող հետևյալ փաստաթղթերը.

1) դիմումատուի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը.

2) դիմումատուի սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի բնօրինակը.

3) տեղեկանք դիմումատուի բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին (անհրաժեշտության դեպքում).

4) բժշկասոցիալական փորձաքննական որոշումը, որը փաստում է 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամության վերաբերյալ կամ հաշմանդամության վկայականը.

5) բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ քաղվածք ամբուլատոր քարտից (առկայության դեպքում).

6) սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթուղթը՝ տրված սոցիալական աջակցության տարածքային գործակալության կողմից (անհրաժեշտության դեպքում).

7) կյանքի դժվարին իրավիճակում գտնվելու հանգամանքը հավաստող փաստերը հիմնավորող փաստաթղթեր (դժբախտ պատահար, ընտանիքի անդամի կորուստ, բնական կամ տեխնածին աղետի պատճառած վնաս և այլ)□

8) Էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու դեպքում՝ դիմումին կամ գրության կցվում են սույն մասում ներկայացված փաստաթղթերի սքանավորված տարբերակները:

18. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները պատճենահանում է, դրանց վրա կատարում է գրառում բնօրինակների հետ համապատասխանության մասին և փաստաթղթերի բնօրինակները վերադարձնում է դիմումատուին: Սույն մասը չի տարածվում էլեկտրոնային կարգով ներկայացված դիմումների վրա:

Անհրաժեշտության դեպքում վերցվում են փաստաթղթերի բնօրինակները:

19. Փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի համապատասխան աշխատակցի կողմից հանձնվում է սոցիալական աջակցության հարցերը քննարկող հանձնաժողովին:

20. Դիմումները կամ գրությունները՝ ստանալուց հետո մեկ շաբաթյա ժամկետում. հանձնաժողովի քարտուղարը դրանք ներկայացնում է հանձնաժողովի նախնական քննարկմանը:

21. Նախնական քննարկման արդյունքում յուրաքանչյուր դիմումին կամ գրությանը տրվում է համապատասխան ընթացք (անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, տնայցի կատարում, ընտանիքի կարիքների գնահատում, դիմողի հետ անհատական հանդիպում, դիմումի գրավոր պատասխանի տրամադրում):

22. Հանձնաժողովը իրականացնում է հետազոտություն (տնային այցելություն) և կազմում դիմումատուի սոցիալական կարիքների գնահատման ակտ:

23. Հրավիրվում է հանձնաժողովի նիստ, որին կարող է մասնակցել դիմումատուն:

24. Հանձնաժողովի տված եզրակացության հիման վրա համայնքի ղեկավարի կողմից կայացվում է սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում կամ գրավոր մերժվում է սոցիալական աջակցության ծառայության տրամադրումը:

25. Համայնքում սոցիալական աջակցության տրամադրման յուրաքանչյուր գործընթաց կազմակերպվում և իրականացվում է «Վարչարարության հիմունքների վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական վարույթի շրջանակներում:

26. Սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումները ընդունվում են 30 աշխատանքային օրվա ընթացքում:

## III. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

27. Տնայցը կատարելու նպատակով հանձնաժողովը ձևավորում է աշխատանքային խումբ և կազմում ժամանակացույց, որից հետո իրականացվում է դիմումատուի ընտանիքի կյանքի պայմանների ուսումնասիրություն:

28. Աշխատանքային խումբը այցելում է դիմողի ընտանիք, կատարում ընտանիքի կարիքների գնահատում և լրացնում գնահատման թերթիկը (Տե՛ս Ձև 1):

29. Անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել կրկնակի այցելություն:

30. Ուսումնասիրության ժամանակ մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հանձնաժողովը կարող է հրավիրել համապատասխան մասնագետների (բժիշկ, հոգեբան և այլն):

31. Ընտանիքի գնահատման թերթիկը՝ տնայց կատարելու օրվանից եռօրյա ժամկետում, աշխատանքային խմբի կողմից ներկայացվում է հանձնաժողովի քարտուղարին:

32. Ներկայացված գնահատման թերթիկները քննարկվում են հանձնաժողովի նիստում:

33. Քննարկման արդյունքներով հանձնաժողովը կազմում է եզրակացություն, որը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

34. Հանձնաժողովի նախագահը եզրակացությունը ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ աջակցություն ցուցաբերելու վերջնական որոշում կայացնելու համար:

35. Համայնքի ղեկավարը որոշումը կայացնում է եզրակացությունը ստանալու օրվանից երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան դիմումը ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

36. Հրատապ լուծում պահանջող և անհապաղ աջակցության անհրաժեշտության վերաբերյալ դիմումների քննարկումն իրականացվում է արագացված ընթացակարգով՝ սոցիալական աշխատողի (սոցիալական աշխատողի հաստիքի բացակայության դեպքում՝ սոցիալական աջակցության վերաբերյալ գործը վարող համապատասխան համայնքային ծառայողի) հատուկ եզրակացության հիման վրա, հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ և անհապաղ որոշումների կայացման միջոցով:

## IV. ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

37. Ընտանիքի կարիքների գնահատումը կատարվում է միավորային համակարգով՝ ելնելով հետևյալ չափորոշիչներից.

1) նպաստառու ընտանիք - 1 միավոր,
2) միայնակ մայր - 1 միավոր,
3) ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա - 1 միավոր,
4) բազմազավակ (չորս և ավելի երեխա ունեցող) ընտանիք - 1 միավոր,
5) պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին)- 2 միավոր (1 միավոր՝ պոտենցիալ ֆինանսական աղբյուրի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
6) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և (կամ) հաշմանդամ երեխա ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին)- 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
7) վարձով կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք - 3 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ անհրաժեշտ գույքի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
8) արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք - 3 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ անհրաժեշտ գույքի բացակայություն, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
9) դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք- 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
10) հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) կամ հաշմանդամություն ստացած անձի ընտանիք - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
11) միայնակ չաշխատող թոշակառու - 2 միավոր (1 միավոր՝ ֆինանսական բեռ, 1 միավոր՝ հոգեբանական իրավիճակ),
12) միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք-1 միավոր.

13) հղի կին ունեցող ընտանիք- 1 միավոր

14) անբարենպաստ այլ պայմաններ – 1-ից 5 միավոր (հիմնավորվում է լրացուցիչ տեղեկատվությամբ և մասնագետի դիտարկումներով):

38. Աջակցությունը ցուցաբերվում է նվազագույն 5 միավոր ստանալու դեպքում:

39. Սույն չափորոշիչների իմաստով ընտանիք է համարվում միևնույն հասցեում մշտապես բնակվող, համատեղ տնտեսություն վարող անձանց խումբը, ինչպես նաև՝ միայնակ ապրող անձը:

## V. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ

40. Աջակցություն տրամադրելու փաստաթղթերի ամբողջական փաթեթում ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմումը կամ գրությունը.

2) դիմողի և (կամ) նրա ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) ընտանիքի և (կամ) նրա անդամի սոցիալական կարգավիճակը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները.

4) ընտանիքի կարիքների գնահատման թերթիկը (ձև1) – լրացվում և ստորագրվում է հանձնաժողովի տունայց կատարած անդամների կողմից.

5) հանձնաժողովի եզրակացությունը.

6)սոցիալական աշխատողի կամ գործը վարող համայնքային ծառայողի հատուկ եզրակացությունը.

7) աջակցություն ցուցաբերելու մասին համայնքի ղեկավարի որոշումը.

8) աջակցությունը դիմողին տրամադրելու փաստը հավաստող փաստաթուղթ:

41. Հանձնաժողովի քարտուղարը յուրաքանչյուր դեպքի համար կազմում է առանձին գործ (սոցիալական գործ) և ապահովում փաստաթղթերի փաթեթի ամբողջականությունը և պահպանվածությունը:

42. Գործերը համարակալվում են արաբական թվերով: Գործերի համարակալումը յուրաքանչյուր տարի վերսկսվում է: Ավարտված գործի էջերը համարակալվում են, գործերը կարվում են և կնքվում համայնքի աշխատակազմի կնիքով:

43. Համայնքապետարանի աշխատակազմի կողմից վարած սոցիալական աջակցության վերաբերյալ գործերը պահպանվում են նաև էլեկտրոնային եղանակով՝ հաշվառման կրիչների միջոցով:

Ձև 1

## ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք

«——»-------------20----թ.

### Ընդհանուր տվյալներ

Դիմողի անուն, ազգանուն, հայրանուն ----------------------------------------------------------
--

Հասցե ------------------------------------------------------------------------------------------

Հեռախոս ---------------------------------------------------------------------------------------

### Ընտանիքի ժողովրդագրական տվյալները

| Անուն, ազգանուն, հայրանուն | Կարգավիճակ | Ծննդյան օր, ամիս, տարի |
| --- | --- | --- |
| | | |
| | | |
| | | |

### Ընտանիքի իրավիճակը

| Իրավիճակ | Նկարագիր |
|---|---|
| Բնակարանային պայմաններ | |
| Կոմունալ-կենցաղային և սանիտարա- հիգիենիկ պայմաններ | |
| Աշխատանքով ապահովվածություն | |
| Եկամուտներ | |
| Հագուստով ապահովվածություն | |
| Սննդով ապահովվածություն | |
| Առողջապահական կարիքներ | |
| Այլ | |

**Ընտանիքի սոցիալական կապերը**

| Հարազատներ, ընկերներ, ծանոթներ, հասարակական կազմակերպություններ, համայնք | |
|---|---|
| տվյալներ | կարգավիճակ |
| | |
| | |

**Լրացուցիչ տեղեկատվություն**

------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------

## Մասնագետի դիտարկումներ

------------------------------------------------------------------------------------------------------------

------------------------------------------------------------------------------------------------------------

## Լուսանկարների առկայություն (անհրաժեշտության դեպքում)

## Ընտանիքի կարիքների գնահատման սանդղակ

| N | Չափորոշիչը | Չափորոշիչի համար սահմանված միավորը | Ընտանիքի ստացած միավորը |
|---|---|---|---|
| 1 | Նպաստառու ընտանիք | 1 | |
| 2 | Միայնակ մայր | 1 | |
| 3 | Ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա | 1 | |
| 4 | Բազմազավակ (չորս և ավելի երեխա ունեցող) ընտանիք | 1 | |
| 5 | Պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին) | 2 | |
| 6 | 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և (կամ) հաշմանդամ երեխա ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին) | 2 | |

| | | | |
|---|---|---|---|
| 7 | Վարձով կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք | 3 | |
| 8 | Արտակարգ իրավիճակից տուժած ընտանիք | 3 | |
| 9 | Դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք | 2 | |
| 10 | Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) կամ հաշմանդամություն ստացած անձի ընտանիք | 2 | |
| 11 | Միայնակ չաշխատող թոշակառու | 2 | |
| 12 | Միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք | 1 | |
| 13 | Հղի կին ունեցող ընտանիք | 1 | |
| 14 | Այլ անբարենպաստ պայմաններ | 1-5 | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | |

Աշխատանքային խմբի անդամների տորագրությունները

*Ձև 2*

<u>Դիմումի ձև</u>

ՀՀ Արմավիրի մարզի

Բաղրամյան համայնքի

Ղեկավար Շանթ Առաքելյանինին

Հասցե.................................................

.................................................բնակիչ

Անուն, ազգանուն................................

.......................................................ից

Հեռախոս............................................

Էլ. փոստ............................................

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**Սոցիալական աջակցություն տրամադրելու մասին**

Հանդիսանում եմ Բաղրամյան համայնքի բնակիչ: Գտնվում եմ սոցիալական ծանր պայմաններում, կյանքի դժվարին իրավիճակում:

..................................................................................................................................

..................................................................................................................................

..................................................................................................................................

..................................................................................................................................

..................................................................................................................................

..................................................................................................................................

..................................................................................................................................

..................................................................................................................................

...............................................................................................................................

...............................................................................................................................

..............................................................................................................................:

**Ներկայացվող փաստաթղթերի ցանկ՝**

| № | Փաստաթղթի անվանումը | Կցված է (կատարվում է✓ նշում) |
|---|---|---|
| 1. | Դիմում՝ լրացված սահմանված ձևով | |
| 2. | Անձը հավաստող փաստաթղթի պատճենը | |
| 3. | Սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի պատճենը | |
| 4. | Տեղեկանք բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին | |
| 5. | Հաշմանդամության վկայականի կամ բժշկասոցիալական փորձաքննական որոշման պատճենը | |
| 6. | Բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ ամբուլատոր քարտից քաղվածք | |
| 7. | Սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթղթի պատճենը՝ տրված սոցիալական ապահովության մարմնի կողմից | |
| 8. | Այլ | |

*Ստորագրելով այս դիմումը՝ չեմ առարկում և տալիս եմ համաձայնություն իմ կողմից հայցվող ծառայությունը ստանալու նպատակով համայնքապետարանի աշխատակազմում իմ անձնական տվյալների մշակման և օգտագործման համար:*

*Ես տեղյակ եմ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքների մասին:*

Ցանկանում եմ ծառայության տրամադրման htm կապված փաստաթղթերը և/կամ ծանուցումները ստանալ

□էլեկտրոնային փոստի միջոցով
□ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով
□պատվիրված նամակով ուղարկելու միջոցով

Դիմող՝ ---------------- ---------------------------------
(ստորագրություն) (դիմումատուի անուն, ազգանուն)

----- ------------- 20-- թ.

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բաղրամյան համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ սահմանված կարգավորումների համատեքստում:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սոցիալական աջակցության տրամադրումը դիտարկվում է որպես համայնքի կամավոր խնդիր, հետևաբար նաև համայնքի կամավոր խնդրի լուծմանը միտված սեփական լիազորություն:

Վերը մեջբերվածի համատեքստում, հարկ է անդրադառնալ համայնքի կամավոր խնդիրների և դրանց լուծմանը միտված սեփական լիազորությունների սահմանադրական կարգավորումներին: Այսպես՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի, համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված սեփական լիազորությունները միտված են լուծելու համայնքի պարտադիր և կամավոր խնդիրները:

Սահմանադրական վերը մեջբերված նորմով միաժամանակ սահմանվում է, որ համայնքի կամավոր խնդիրները սահմանվում են համայնքի ավագանու որոշումներով:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կարգավորումները ցույց են տալիս, որ օրենսդիրը համայնքում սոցիալական աջակցության տրամադրումը դիտարկել է որպես համայնքի կամավոր խնդիր, հետևաբար օրենսդրական իմպերատիվ պահանջ է սահմանել, որ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծումը իրականացվի ավագանու կողմից սահմանված չափորոշիչների հիման վրա:

Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչների մշակման համար հիմք են հանդիսացել նաև «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 18-րդ հոդվածի դրույթները:

Միաժամանակ, օրենսդրական կարգավորումների զատ, հարկ է անդրադառնալ նաև համայնքում իրականացվող սոցիալական աջակցության տեղական քաղաքականությանը, կամ որ նույնն է՝ իրավակիրառական պրակտիկային:

Сит էության համայնքում սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները նորմատիվ իրավական կարգավորումների իմաստով կանոնակարգված չեն, ինչի պայմաններում համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները բազմաթիվ դեպքերում, առավելապես՝ համայնքում իրավական իսկողության և հաշվեքննության իրականացման գործընթացներում, դիտարկվում են որպես ոչ իրավաչափ:

Սույն որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը նրանում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանու համար նախատեսվել է պարտավորություն, առանձին նորմատիվային բնույթ կրող որոշմամբ սահմանելու համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդրի լուծման չափորոշիչները:

Բացի օրենսդրական պահանջի իրագործման անհրաժեշտությունից, առկա է նաև իրավակիրառական անհրաժեշտություն և նպատակահարմարություն, համայնքային մակարդակում կարգավորելու համայնքի բյուջետային միջոցների հաշվին սոցիալական աջակցություն տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները, սահմանելով այդ իրավահարաբերությունների առաջացմանը, փոփոխմանը կամ դադարեցմանը միտված ընթացակարգերը և ենթաօրենսդրական կառուցակարգերը:

Նախագծի կարգավորման առարկայի շրջանակներում, առաջարկվում է սահմանել այն չափորոշիչները և ընթացակարգերը, որոնց համաձայն կիրականացվի համայնքում սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացը:

Նախագծով սահմանվում է, որ սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացը ապահովելու համար՝ որպես համայնքի կամավոր խնդրի լուծմանն ուղղված ավագանու սահմանած սեփական լիազորություն, համայնքի ղեկավարի կողմից ստեղծվում է մշտական գործող հանձնաժողով:

Նախագծով սահմանվում են նաև հանձնաժողովի գործունեության ընթացակարգերը, ուսումնասիրությունների կազմակերպման, եզրակացությունների տրման, որոշումների կայացման կարգը, սոցիալական փաթեթում ընդգրկվող անհրաժեշտ փաստաթղթերի կազմը: Սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած անապահով ընտանիքի (անձի) կարիքների գնահատման համար առաջարկվում է սահմանել միավորային հետևյալ համակարգը՝

⇒ նպաստառու ընտանիք - 1 միավոր,

⇒ միայնակ մայր - 1 միավոր,

⇒ ամուսնալուծված կին կամ տղամարդ - 1 միավոր,

⇒ բազմանդամ ընտանիք - 1 միավոր,

⇒ բանակում զինվոր - 2 միավոր,

⇒ ընտանիքի անդամի 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամություն - 2 միավոր,

⇒ բնակվում են վարձով կամ վագոն-տնակում - 3 միավոր,

⇒ արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած ընտանիք -3 միավոր,

⇒ ընտանիքի անդամի մահվան դեպք - 2 միավոր,

⇒ հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհվածի (անհետ կորածի) կամ ռազմական գործողությունների ժամանակ հաշմանդամ դարձած անձի ընտանիք - 2 միավոր,

⇒ միայնակ թոշակառու - 2 միավոր,

⇒ անբարենպաստ այլ պայմաններ - 5 միավոր (հիմնավորվում է լրացուցիչ տեղեկատվությամբ և մասնագետի դիտարկումներով):

Աջակցություն կարող է ցուցաբերվել նվազագույնը 5 միավոր ստանալու դեպքում: Նախագծով առաջարկվում է հաստատել նաև ընտանիքի գնահատման թերթիկի ձևը (Ձև 1): Միաժամանակ, Նախագծի Ձև 2 հավելվածով ներկայացվում է սոցիալական աջակցության տրամադրման վերաբերյալ դիմումի օրինակելի ձևը, որը համայնքապետարանի կողմից կարող է կիրառվել դիմումներ ընդունելու ժամանակ:

Համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու չափորոշիչները սահմանելու մասին ավագանու որոշման նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կարգավորելու սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Նախագծի ընդունման արդյունքում սոցիալական աջակցության տրամադրման վերաբերյալ համայնքի կամավոր խնդիրների լուծումը համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կարող է իրականացվել ենթաօրենսդրական նորմատիվ կարգավորումների համատեքստում, ինչը հնարավորություն կընձեռի թե՛ համայնքի ղեկավարի և թե՛ համայնքի աշխատակազմի պաշտոնատար անձանց համար, գործելու բացառապես իրենց վերապահված լիազորությունների և գործառույթների շրջանակներում, ապահովելով

սոցիալական աջակցության տրամադրման գործընթացներում օրինականության պահպանումը:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Բաղրամյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» Բաղրամյան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Բաղրամյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» Բաղրամյան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Բաղրամյան համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փող. 2/3
հեռախոս 023332550
էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2022 թվականի N23-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԳԻՆԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ մասով 28-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդված 4-րդ մասով Բաղրամյան ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ենթակայության տակ գտնվող <<ԱՐԳԻՆԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ

առևտրային կազմակերպության
կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| Կողմ (14) | Դեմ (0) | Ձեռնպահ (1) |
|---|---|---|

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

5.Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Հաստատության անվանումն է` 1) հայերեն լրիվ` «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Արգինայի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
2) հայերեն կրճատ` «ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Արգինայի մանկապարտեզ» ՀՈԱԿ
3) ռուսերեն լրիվ` ------------------------------------------------------------
4) ռուսերեն կրճատ` ------------------------------------------------------------
5) անգլերեն լրիվ` ------------------------------------------------------------
----
6) անգլերեն կրճատ` ------------------------------------------------------------
-

7. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր` հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:
8. Հաստատությունն ունի պաշտոնական կայք` baghramyan.am, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:
9. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
10. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
11. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների

հետ:

12. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

13. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի Ðրթության կազմակերպումն t նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:
14. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանbնահատուÐ պայմանների Ðարիք ունեցող, զարգացման առանbնահատկությունների համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն t:
**15.**Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է իշահ անհատի, հասարակության և պետության:

16. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում t հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:
**17.** Հաստատության գործունեությունը հիմնվում

է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

18. Հwuտատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական 4րթական 2ափորո2ի2ին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնwhատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

**19.** Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անքաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

**2)** մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

**3)** սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական 4առավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով wողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

**20.** Հwumwmnությունը կարող t իրականwցնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

**1)** լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, 6ամբարներում կազմակերպվող վ6արովի ծառայություններ.

**2)** ստեղծել ռեսուրս-կենտրոններ, իրականացնել մասնագետների վերապատրաստման,

պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

**25.** Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

26. Հաստատության խմբերի առավtլագույն խտությունը սահմանում է կրթության պետական 4wռավարման լիազորված մարմինը:

**27.** Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի **1**-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

**28.** Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի **20**-ից մինչև **30**-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

29. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ 4րթության պետական կառավարման լիwզորված մարմնի սահմանած կարգի համաձայն:
30. Հաստատությունն իր գործունեության ուղղություններին համապատասխան մանկապարտեզ է՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ. Հաստատությունն աշխատում է 2աբաթական հնգօրյա,օրական **9**-ժամյա աշխատանքային ռեժիմով

31. Թույլատրվում է հաստատության կամ wռանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն: **32.** Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն wռողջապահության բնագավwռի պետական կwռավարման լիազորված մարմնի

սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի LC օրինակելի սննդակազմի:
33. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:
34. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը հիմնադրի միջոցների հաշվին տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության:

## IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

35.Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝
1)նախադպրոցական տարիքի երեխան.
2)ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).
3)տնօրենը,մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը),դաստիարակը,դաստիարակի օգնականը,լոգոպեդը,հոգեբանը,սոցիալական մանկավարժը,ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը,բուժաշխատողը,խմբակի ղեկավարը այլ մասնագետներ:
36.Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի,որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

37. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:
38. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:
39. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված

մարմնի սահմանած տարիֆորակավորման բնութագրերին:

40. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

## V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

41. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն), որը աշխատանքի նշանակվում և ազատվում է օրենքով սահմանված կարգով:

42. Լաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

43. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

44.Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5)լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

45. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների)մարմիններ:

46. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգնուստույան առաջին

նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

47. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

48. Տնօրtնն իրականwցնում t hաumumnության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաննbրում, ղեկավuրում t hաumumnության գործունեության ու կրում պատասխանատվություն օրtնքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

49. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է hաumwmnության մանկավuրժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս t hաumumnության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) հիմնադրի հետ քննարկելով և համաձայնեցնtլով՝ աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում t հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կuրգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ

7)օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրwhանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումնtր և վերահսկում դրանց կատարումը.

8)համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտmnնի նկարագրի՝ անցկացնում t դաստիարակների թափուր տեղի համար մրցույթը՝ հիմնադրի հետ խորհրդակցելով՝ կատարում մանկավարժական և այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն t իրականացնում հաստատության աշխատողների 4ողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) wywhnվnւմ t ներքին աշխատանքային 4արգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայwցնում հիմնադրի հաստատմանը.

12)իրականughnւմ t Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13) պատասխանwmnւ t նախադպրոցական 4րթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

**50.** Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

**51.** Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

1) իրականացնում t կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.

3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4)կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.

5) դաստիարակնtրին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.

6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:

52.Դաստիարակը՝

1)պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.

2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.

3)մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

53. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝

1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.

2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

54. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

1) կազմակtրպում է հասmwmnւթյան տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների սmսgnւմն ու պահպանությունը.

2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

3) հետևում t հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ tձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

## VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

55.2 ասmwmnւթյան սեփականությունը ձևավորվում t հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև hwստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

56. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

57.2 իմնադիրը սեփականության իրավունքով hwստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից hbmn մնացած գույքի:

58. Հասmwmnւթյան սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

59. Հասmwmnւթյան սtփականության վրա կարող t տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

60.Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

61. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

62.Հաստատության շենքը կարող է օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

63.2 wuտատության գույքը կարող t վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

64.2 աստատության գույքի վարձակալումից ստացվwb եկամուտը հանդիսանում t հաստատության սtփականությունը և կարող t օգտագործվել միայն 4անոնադրական գործառույթների իրականացման համար:

65. Հwumwmnության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

66.Հաumwmnությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

67. Լաստատությունը ֆինանսավորում t հիմնադիրը: Հwuտատության ֆինանսական միջոցները գոյանում tն հիմնադրի հատկwgումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ 2արգելված լրացուցիչ աղբյուրներից:

68. Հաստատության՝ մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը,այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում t Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

69. Հաumwmnության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգtiլված և hwumwmnւթյան 4անոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

**70.** Հwumwmnւթյան գոpbnւնեnւթյան տարեկան ֆինանսական հաշվետվությունների hավաստիությունը ենթակա t աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## VII. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

**71.** Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում t Հայwuտանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փող. 2/3
հեռախոս 023332550
Էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov

## ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2022 թվականի N 24-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԳԻՆԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը Բաղրամյան ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ենթակայության տակ գտնվող<<ԱՐԳԻՆԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածների

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (14) Դեմ (0) Ձեռնպահ (1)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________________ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կ.Տ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2022թ-ի փետրվարի 8-ի թիվ 1 նիստի
թիվ 16 որոշմամբ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
,,ԱՐԳԻՆԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ-Ի

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | |
|---|---|---|---|---|
| 1 | Մանկապարտեզի տնօրեն | 1 | 150000 | 150000 |
| 2 | Մոթոդիստ | 0,25 | 130000 | 32500 |
| 3 | Դաստիարակ | 1,25 | 130000 | 162500 |
| 4 | Հաշվապահ | 0,5 | 120000 | 60000 |
| 5 | Դաստիարակի օգնական | 1,1 | 120000 | 132000 |
| 6 | Խոհարար | 1 | 120000 | 120000 |
| 7 | Խոհարարի օգնական | 0,5 | 94000 | 47000 |
| 8 | Բուժքույր | 0,5 | 94000 | 47000 |
| 9 | Երաժիշտ | 0,25 | 94000 | 24000 |
| 10 | Տնտեսվար | 0,25 | 94000 | 24000 |
| 11 | Օժանդակ բանվոր | 0,25 | 94000 | 24000 |
| 12 | Հավաքարար | 0,5 | 94000 | 47000 |
| | Ընդամեն | 7,35 | 1334000 | 870000 |
| | | | | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փող. 2/3
հեռախոս 023332550
Էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2022 թվականի N 25-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻԱ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելուվ Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1–ի մասի 21–րդ կետով և համայնքի ղեկավարի իր լիազորությունների շրջանակներում կատարված առաջարկությունը Բաղրամյան համայնքի ավագանին որոշում է

1.Հյաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման կոմիտեին սեփականության իրավունքով տալ Հայաստանի Հանրապետության Բաղրամյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Արևադաշտ գյուղի միջնակարգ դպրոցը:

2.Համաձայնություն տալ  համայնքի ղեկավարին իրականացնել օրենքով սահմանված իրավասություններ գույքի տրամադրման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

| Կողմ (14) | Դեմ (0) | Ձեռնպահ (1) |
| --- | --- | --- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________________ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Կ. Տ.)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փող. 2/3
հեռախոս 023332550
էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2022 թվականի   N 26–Ա

### *ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետով և բնակիչների դիմումները Բաղրամյան ավագանին որոշեց

1.Ուսումնասիրել դիմումատուների սոցիալական վիճակը և սահմանված կարգով ցուցաբերել ֆինանսական օգնություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Կողմ** (14) **Դեմ** (0) **Ձեռնպահ** (1)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ____________________ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փող. 2/3
հեռախոս 023332550
Էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2022 թվականի N 27-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱԼՎՈՐԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻ

Ղեկավարվելով «Հողային օրեսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետով ,«Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 1–ի մասի,31–րդ կետով,Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Տալվորիկ գյուղի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թականի հուլիսի 7-ի թիվ 161 դրական եզրակացությունը, և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Գալստյանի դիմումը, ինչպես նաև Բաղրամյան համայնքի ղեավարի առաջարկությունը Բաղրամյան ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Քաղաքացի Արթուր Գալստյանի սեփականության իրավունքով պատկանող 04-091-0106-0030կադաստրային ծածկագրի տակ գտնվող 24.2861հա գյուղատնտեսական նշանակության հողերից 0. 392 հա վարելահողը փոխադրել ջրային հողեր նպատակային նշանակության հողերի:

2.Առաջարկել քաղաքացի Արթուր Գալստյանի համայնքի բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կադաստրային արժեքների՝

նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը340.000 (երեք հարյուր քառասուն հազար դրամ) ՀՀ դրամ:

3.Առաջարկել համայնքի ղեկավարին ՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքային հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքային հողային հաշվեկշռում:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Արթուր Գալստյանի որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (1)**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________________ ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Կ.Տ.)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Բաղրամյան համայնք, հասցե Բաղրամյան փող. 2/3
հեռախոս 023332550
Էլ. փոստ baghramyanbaghramyan.armavir@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«07» մարտի 2022 թվականի N 28-Ա

## «ԱԼԵՆԳՐՈՒՊ» ՍՊԸ–ԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԵՆԻԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻ

Ղեկավարվելով «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 15-ին կետով ,«Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 1–ի մասի,31–րդ կետով, և հիմք ընդունելով «Ալենգրուպ»ՍՊԸ–ի տնօրեն Ալեն Գալստյանի դիմումը, ինչպես նաև Բաղրամյան համայնքի ղեկավարի առաջարկությունըԲաղրամյան ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Ալենգրուպ»ՍՊԸ–ի սեփականության իրավունքով պատկանող 04-080-0102-0621կադաստրային ծածկագրի տակ գտնվող 56.2247հա գյուղատնտեսական նշանակության հողերից 1.0655 հա գյուղատնտեսական նշանակության հողը փոխադրել« ջրային հողեր» նպատակային նշանակության հողերի ոռոգման ջրավազան կառուցելու նպատակով:

2.Առաջարկել քաղաքացի «Ալենգրուպ» ՍՊԻ–ին համայնքի բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կադաստրային արժեքների՝ նպատակային

նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը3.522.750 (երեք միլիոն հինգ հարյուր քսաներկու  հազար  յոթ հարյուր հիսուն ) ՀՀ դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին `  հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքային հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքային հողային հաշվեկշռում:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում  որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Կողմ** (14) **Դեմ** (0) **Ձեռնպահ** (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ